AZG NEW PDF.qxd 23/04/2010 22:55 Page 1

Azg Ազգ

24 ԱՊՐԻԼ 2010 ՇԱԲԱԹ 74 (4454)

ISSN: 1829-1651

Ամենայն հայոց կաթողիկոսը կհանդիպի Իլհամ Ալիեւին

Ապրիլի 26-27-ին Բաքվում կայանալիք միջկրոնական գագաթաժողովի շրջանակներում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը կհանդիպի Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին:

«**Ազգի**» հեռախոսազրույցում Մայր աթոռ Ս. Էջմիածնի մամլո դիվանի պատասխանատու **Վահրամ քահանա Մելիքյանն** ասաց, որ Ալիեւը եւ Գարեգին Երկրորդը կունենան առանձնազրույց:

Ներկայացնելով Բաքվում կայանալիք հանդիպումները՝ Մելիքյանն ասաց, որ Գարեգին Երկրորդը կմասնակցի գագաթաժողովին մասնակից հոգեւորականների համար կազմակերպվելիք Ադրբեջանի նախագահի ընդունելությանը: Կաթողիկոսը կմասնակցի նաեւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարքի, վրաց պատրիարքի եւ Ադրբեջանի կրոնական առաջնորդի միջեւ կայանալիք քառակողմ հանդիպմանը, որի ավարտին կստորագրվի տարածաշրջանի տարբեր խնդիրների վերաբերյալ համատեղ հայտարարություն: Թեեւ վերջին պահին տեղեկացանք, Կիրիլ պատրիարքը հիվանդության պատճառով կարող է ներկա չգտնվել հանդիպմանը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Անկարելի հարեւանը

Անցյալ հուլիսին Երեւանում մեր թերթին տված հարցազրույցում Կիպրոսի Հանրապետության նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասը հայ-թուրքական բանակցություններին անդրադառնալով ասաց, որ դրանք շատ դժվար են լինելու: Փորձառու պետական-քաղաքական գործիչը չէր սխալվում, թեեւ ցարդ շարունակում է բանակցությունները թուրքական կողմի հետ...

1974 թ.-ից ի վեր Կիպրոսի 40 տոկոսը զավթած Թուրքիան, նույնիսկ կղզու թուրք համայնքի շատ ներկայացուցիչների ցանկությանը հակառակ, խոչընդոտում է երկրի եւ նրա զույգ համայնքների վերամիավորումը, արդեն 36 տարուց ի վեր:

Հայ-թուրքական շփումների, բանակցությունների եւ փոխայցելությունների մեկամսյա փորձ-փորձառությունն ապացուցեց ոչ միայն նախագահ Խրիստոֆիասի հոռետեսության ճշմարտացիությունը, այլեւ պոլսահայ փորձառու մեր որոշ հայրենակիցների կանխատեսումների հիմնավորվածությունը: Թուրքիան, ասում էին նրանք խորհրդապահական հանդիպումների ժամանակ, նույնիսկ հակատրամաբանական քայլերի կգնա ապացուցելու համար իր գերակայությունը, ցուցահանելու համար իր ուժը:

Մեր պարագայում այդ գերակայությունը Թուրքիան հասկանում է յուրովի՝ փորձել զոհի կարգավիճակում պահել մեզ՝ շարունակել մեր աչքերի մեջ նայելով ուրանալ, ժխտել, չարանենգել: Միաժամանակ փորձում է հիմարացնել աշխարհը՝ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման եւ սահմանների վերաբացման իմիտացիա ստեղծելով:

Գերակայության այդ բարդույթը այս անգամ հանդիպեց հայկական կողմի սառը դիմադրության: Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը նախորդ օրվա իր ուղերձում փաստորեն հասկացրեց, որ Հայաստան պետությունն այլեւս նպատակ չունի իմիտացիոն խաղերին մասնակցելու, որ Հայաստանն իր իրավունքներից որեւէ բան զիջելու նպատակ չունի, որ բոլոր պետությունները՝ ուժեղ կամ թույլ, փոքր կամ մեծ, մի բանում հավասար են՝ պետական արժանապատվության:

Կփոխի՞ Թուրքիան իր դիրքորոշումը, կհրաժարվի՞ Հայաստանն իր ծավալապաշտական նկրտումների դիմաց ցցված «անիծյալ սեպ» համարելուց եւ ընդհանրապես պանթուրքիստական իր ծրագրերից: Եվ վերջապես՝ ձեռք կբերի՞ Ցեղասպանությունն ուրանալու, ժխտելու, իր պատասխանատվությունից հրաժարվելու կեցվածքից: Ներկա պայմաններում դժվար է հուսալ: Թուրքիան կրկին անգամ փաստեց, որ ինքը մեզ համար մնում է անկարելի հարեւան, գոնե՝ ցնոր տնօրինություն...

Մեզ մնում է կարգի բերել մեր տունը, բարոյապես ու տնտեսապես զարգացնել, հզորացնել այն, եւ շարունակել պետական եւ ազգային արժանապատվությամբ խոսել բոլորի հետ, պաշտպանել մեր իրավունքներն ու արդարությունը ամեն գնով: Միայն այդ ձեւով կարող ենք դիմագրավել բոլոր փորձությունները եւ միայն այդ դիրքերից կարող ենք խոսել մեր հարեւանների հետ, այդ թվում՝ անկարելի հարեւանի հետ:

ՖՈՏՈԼՈՒՐ

Մինսկի խմբի երկրները զգում են հայ-թուրքական գործընթացին նոր լիցք հաղորդելու անհրաժեշտությունը

Այլապես արշանագրությունների կատեցման ՀՀ նախագահի որոշումը ոչ թե հավանության կարժանանար, այլ կբախվեր հակազդեցության

ՀԱԿՈԲ ՉԱԲԲՈՏՆ

Ապրիլի 22-ին ՀՀ Ազգային ժողովում կառավարող կոալիցիայի անդամ կուսակցությունները հանդես եկան հայ-թուրքական արձանագրությունների վավերացման ընթացակարգը կասեցնելու հայտարարությամբ: Նույն օրը դրան հետեւեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերձը:

«Ազգի» նախորդ համարում մեր աշխատակից Աղավնի Հարությունյանն անդրադարձել է ուղերձի բովանդակությանը: Պարզապես ուղերձում նախագահ Սարգսյանն ասում էր, որ ինքն արձանագրությունների շուրջը քննարկումներ է ունեցել Ֆրանսիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահների հետ, վերջիններս հորդորել են շարունակել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացը, հարգելով նրանց, հարցը Անվտանգության խորհրդում քննարկելուց հետո, վճռել են կասեցնել արձանագրությունների վավերացումը, այլ ոչ թե դուրս գալ գործընթացից:

Արձանագրությունների վավերացման ընթացակարգը կասեցնելու որոշումը նախապես կառավարող կուսակցությունների հետ եւ Անվտանգության խորհրդում քննարկելու պարագան ցույց է տալիս, որ վերոհիշյալ հայտարարությունն ու ուղերձը որքան էլ անակնկալ թվան, եղել են նախորդ մշակված դիրքորոշման դրսեւորում: Էլ չենք խոսում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի նախագահների հետ Սերժ Սարգսյանի քննարկումների մասին, որոնք իրականացվել են հանդիպումներում:

Ինչպես հայտնի է, Վաշինգտոնում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ էրդողանին հանդիպելուց հետո, նախագահ Սարգսյանը հանդիպել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ: Վերադարձին՝ Փարիզում, հանդիպեց Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի հետ, ապա նաեւ Մոսկվայում՝ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ: Չի բացառվում, որ նրա այս հանդիպումները պայմանավորած լինեն կառավարող կուսակցությունների Արձանագրությունների առնչությամբ արած հայտարարությունն ու ՀՀ նախագահի հեռուստաուղերձը, որը թերեւս հայտարարության հիմնավորումն էր:

Տես էջ 3

Սարգսյան-Ալիեւ հանդիպում Մոսկվայո՞ւմ

Հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացի կասեցման ու դրա հետ մեկտեղ հայ-թուրքական գործընթացում «դուռը բաց թողնելու» Հայաստանի դիրքորոշման մասին Հայաստանի նախագահի ուղերձի մեկնաբանություններում քիչ չեն կարծիքները, թե այսպիսով մի որոշ ժամանակ դադարի վիճակում կլինի հայ-թուրքականը, եւ առավել կակտիվանա հայ-ադրբեջանականը:

Այս համատեքստում հետաքրքրական է, որ, ըստ Armenia Today-ի, մոտ ժամանակներս, իսկ ավելի հավանական է՝ մայիսի 8-ին, հնարավոր է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում Մոսկվայում՝ Հաղթանակի օրվա կապակցությամբ նախատեսված միջոցառումների շրջանակներում:

Ըստ աղբյուրի, այս հանդիպման հավանականությունն ու կազմակերպումն էին քննարկել օրերս Մոսկվայում հանդիպում անցկացրած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները:

Թեմայի շրջանակներում առանձնակի հետաքրքրական է, որ Ռուսաստանի արտգործնախարարությունից խոստացել են մեկնաբանություն տալ Թուրքիայի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ-երկրների կազմում հայտնվելու հնարավորության առնչությամբ: Ըստ ՌԴ ԱԳՆ պաշտոնական տեղեկատվության, Ռուսաստանը դեռ ուսումնասիրում է Թուրքիայի՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների կազմում ընդգրկվելու հնարավորությունը:

Ա. Հ.

Երաժշտական աղոթք անմեղ նահատակների հիշատակին

Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի, Կամերային եւ «Հովեր» կամերային երգչախմբերի կատարմամբ Մոցարտի «Ռեքվիեմ» ստեղծագործությունը երեկ գիշեր հնչեց Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին: Լռության մեջ՝ Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ ունկնդրելով հանճարեղ երաժշտությունը հրաշալի կատարմամբ, թերեւս յուրաքանչյուրը խորհում էր կյանքի, մահվան, արդարության եւ մարդկային արժեքների մասին: Երաժշտությամբ իրենց աղթքն առ Աստված ուղղեցին ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանը**, առաջին տիկին **Ռիտա Սարգսյանը**, մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը**, հասարակական-քաղաքական գործիչներ, հոգեւորականներ ու հարյուրավոր հանդիսատեսներ:

Համերգի կազմակերպիչներն էին ՀՀ մշակույթի նախարարությունը, Արմենական-Ռամկավար Ազգային կուսակցությունն ու Թեքեյան մշակութային միությունը:

Հ. Հ.

AZG NEW PDF.qxd 23/04/2010 22:36 Page 1

ԱԶԳ **Ընթացիկ**

Հայ հասարակությունն ու Հայոց ցեղասպանությունը

Մասնագիտությամբ տնտեսագետ **Վիգեն Խաչատրյանի** երազանքն է իր ծնողների ծննդավայրը՝ Վանը տեսնելը, որտեղից նրա ծնողները գաղթել են Մեծ եղեռնի տարիներին:

«Պատմս եղել է Վանի փաստաբաններից, մի անգամ դատի ժամանակ նա թույլ չի տվել, որ անտեղի դատեն մի թուրք մեծահարուստի, այսինքն՝ փրկել է նրան կալանավորումից: Տարիներ անց՝ կոտորածի օրերին, այդ թուրք մեծահարուստը օգնել է պատիս, որ վերջինս ընտանիքի հետ փախչի Վանից: Նա մի օր առաջ զգուշացրել է պատիս, որ թուրքերը հարձակվելու են նրա տան վրա, նաեւ գաղտնի կերպով էշեր է տրամադրել, որ հարազատներս կարողանան փախչել, - պատմում է Վիգեն Խաչատրյանը,- ցավոք, գաղթի ճանապարհին պատս կորել է, տատս, նրանց 7 երեխաներից 6-ը, այդ թվում նաեւ մայրս, կարողացել են փրկվել»:

Վիգեն Խաչատրյանն ասում է, որ միայն ապրիլի 24-ով չի սկսվում ու վերջանում Ցեղասպանությունը:

«Ցեղասպանությունը նաեւ իմ ընտանիքի պատմությունն է: Ապրիլի 24-ին պարտադիր գնալու եմ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, սակայն զոհերի հիշատակը հարգելը հուշահամալիր գնալով կամ չգնալով չի որոշվում: Ամեն հայ պետք է լավ իմանա եւ ճիշտ ընկալի իր պատմությունը», նշում է Վիգեն Խաչատրյանը:

Ցեղասպանության մասին անընդհատ հիշելով մենք չպետք է խղճահարություն առաջացնենք այլ ժողովուրդների մեջ. այսպես արտահայտվեցին Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) կուլտուրայի ֆակուլտետի ուսանողները:

«Լավ է, որ աշխարհում շատերն իմանան Հայոց ցեղասպանության մասին, սակայն հայերին չպետք է ճանաչեն միայն Ցեղասպանությունով ու չպետք է ճանաչեն միայն որպես խեղճ ու կրակ մի ժողովրդի», ասաց կուլտուրայի ֆակուլտետի ռադիոլրագրության բաժնի ուսանողուհի **Նինա Սեյրանյանը** եւ հավելեց, որ իրենք ամբողջ կուրսով ապրիլի 24-ին անպայման գնալու են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Նինա Սեյրանյանի հետ համամիտ էր նաեւ նույն բաժնի ուսանողուհի **Անահիտ Կասամանյանը.**

«Իհարկե, պետք է հիշել անցյալը, սակայն չապրել միայն անցյալով կամ մտածելով՝ ինչ կլինի ապագայում, մենք ուզում ենք ապրել ներկայով: Աշխարհի տարբեր ժողովուրդներ պետք է ճանաչեն մեզ նաեւ մեր արժանիքներով»:

ՀՊՄՀ-ի կուլտուրայի ֆակուլտետը ամեն տարի ապրիլի 24-ին երթ է կազմակերպում դեպի Ծիծեռնակաբերդ:

«Կարծում եմ՝ հուշահամալիրի մոտ Թուրքիայի դրոշն այրել պետք չէ, դա ավելորդ ագրեսիա ու թշնամանք է ստեղծում, հայ եւ թուրք երիտասարդների միջեւ չպետք է թշնամանք լինի, իշխանությունների պատճառով չպետք է տուժեն ժողովուրդները», ասում է կուլտուրայի ֆակուլտետի ուսխորհրդի նախագահի պաշտոնակատար **Վարազդատ Եղիազարյանը**:

Էդուարդ Վիրաբյանը 1981-83 թվականներին աշխատել է Երզրումում, շինարարական աշխատանքներ է կատարել: Նա ասում է. «Թուրքերը հայերիս հետ վատ չէին վարվում, բայց դե թուրքը մնում է թուրք: Ցեղասպանությունը կարծես Թուրքիայի կոկորդին կանգնած ոսկոր լինի, որը նա այդպես էլ չի ուզում ճանաչել: Իմ համար ամենակարեւորը բարոյական փոխհատուցումն է, քանի որ միայն այդ դեպքում կփոխվի թուրք ժողովրդի բարոյական մակարդակը»:

Եթե Թուրքիան պատասխան չտա իր կատարած ոճրագործության համար, ապա աշխարհն այդպես էլ չի ճանաչի նրան որպես քաղաքակիրթ պետության:

«Եթե Թուրքիան չի ընդունում իր կատարած հանցանքը, ապա նա պատրաստ է կրկնել այդ հանցանքը, օրինակ՝ կկատարի մշակութային ցեղասպանություն: Նա պետք է ներողություն խնդրի հայերից, որից հետո նոր-նոր կվերանա հայ եւ թուրք ժողովուրդների թշնամանքը», ասում է 66-ամյա սփյուռքահայ **Ժիրայրը**: Վերջինիս կարծիքով՝ ապրիլի 24-ը մի ուժ է, որը միավորում է եւ՛ Սփյուռքի, եւ՛ Հայաստանի հայությանը:

«Մեր ազգը պետք է միասնական լինի միշտ, ինչը, ցավոք, չենք տեսնում: Մենք տաղանդավոր ենք որպես անհատներ, սակայն որպես հավաքականություն՝ ոչ», հավելեց Ժիրայրը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հիշատակի ցերեկույթ՝ նվիրված Մեծ եղեռնի 95-րդ տարելիցին

Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) կուլտուրայի ֆակուլտետում երեկ կազմակերպվել էր հիշատակի ցերեկույթ՝ նվիրված Մեծ եղեռնի 95-րդ տարելիցին: Միջոցառման կազմակերպիչը նույն համալսարանի մշակույթի կենտրոնի տնօրեն Արկադի Շեկունցն էր: Ելույթներով հանդես եկան ՀՊՄՀ-ի «Ավե Մարիա» կամերային երգչախումբն ու ջութակահարների անսամբլը: Միջոցառման բոլոր մասնակիցները ՀՊՄՀ-ի ուսանողներն ու դասախոսներն էին:

Ի. Պ.

«Նախագահը ժամանակ տվեց ոչ միայն Թուրքիային, այլեւ իրեն ու հայ հասարակությանը»

Երեկ Երեւանի կենտրոնական փողոցներում կատարած փոքրիկ հարցախույզից պարզ դարձավ, որ քաղաքացիների հիմնական հետաքրքիր չի հետաքրքրում հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ուղղությամբ արդեն մեկ տարի ընթացող գործընթացը: Պահանջվեց երկու ժամ գործընթացին տեղյակ 5-6 հոգու կարծիք լսելու համար: Տպավորությունն այն էր, որ այդ հարաբերությունները հետաքրքրում են միայն լրագրողներին, քաղաքական գործիչներին ու քաղաքագետներին: Ի տարբերություն նրանց, որ ընդունում ու կանխագուշակում են, թե սահմանը ե՞րբ կբացվի կամ ապրիլի 24-ին Օբաման ի՞նչ կասի, հասարակությունը բոլորովին այլ անհանգստություններ ունի, ու կարծես «ֆուտբոլային դիվանագիտությունից» նրանց հետաքրքրում էր միայն ֆուտբոլը, իսկ քանի որ հանդիպումները վաղուց ավարտվել են, Հայաստանի հավաքականն էլ երկու անգամ պարտվել է, քաղաքացիները կարծես մոռացել են հայ-թուրքականի, «ֆուտբոլային դիվանագիտության» մասին ու հետաքրքրվում են միայն կենցաղային առօրյա հոգսերով՝ գազի գնի բարձրացումից մինչեւ օրեցօր թանկացող ապրանքներ, ուսման, բնակարանի վարձ եւ այլն:

«Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ նախագահի ելույթը լսե՞լ եք» հարցին ֆչերը պատասխանեցին: «Ո՛չ, չեմ լսել» պատասխանողները, որ հսկայական թիվ էին կազմում, հավելում էին, որ նախապես տեղյակ էին, սակայն հարկ չեն համարել լսել, որովհետեւ դա իրենց չի հետաքրքրում:

«Ինձ ինչ, հայ-թուրքական հարաբերությունները կասեցվել են, չեն կասեցվել: Ամսվա վերջին գազի գնի հաշիվը կստանամ, դրա մասին հարցրե՛ք, դրա մասին եմ մտածում, թե չէ դրել եք հայ-թուրքական, Օբամա ու էլի եսիմ ինչ: Ձեզ ասում՝ ժողովուրդը սոված է, փող չունի, աշխատանք չունի: Դրել ու քննարկում եք՝ սահմանը կբացվի՞, թե՞ չի բացվի», բարկացավ մեկը:

Նախագահի ելույթը լսած ու հայ-թուրքական հարաբերություններով հիշ թե շատ հետաքրքրվող անձինք հիմնականում դրական գնահատեցին նախագահի դիրքորոշումը:

«Միեւնույնն է՝ արդյունք չկար: Որքա՞ն կարելի է կուլ գնալ թուրքերին, անհրաժեշտ էր կոշտ դիրքորոշում: Այս առումով նախագահի ելույթը շատ լավն էր», նկատեց ինժեներ **Սպարտակ Իսպիրյանը**:

«Ելույթը շատ լավն էր, ճիշտ արեց, որ հրաժարվեց: Թուրքերը ձգձգում էին, բացի այդ, հայ-թուրքական հարաբերություններում միշտ քննարկվում էր Ղարաբաղի հարցը, իսկ մենք համաձայն չենք Ղարաբաղի գնով սահման բացել», ասաց **Գարիկ Արզումանյանը**:

Հեղինե Հարությունյանն էլ նկատում է, որ նախագահի ելույթը ուշացած էր:

«Ի սկզբանե դեմ էի հայ-թուրքական այս գործընթացին: Նախագահն ու կոալիցիոն ուժերը, որ հայտարարությամբ հանդես եկան, պետք է ավելի շուտ հասկանային, որ Թուրքիան նախապայմանների լեզվով է խոսում եւ չարժեր այդ նախաձեռնությունն ընդհանրապես սկսել: Ընդհանուր առմամբ նախագահի ելույթից գոհ եմ, բայց չհասկացա, թե ինչու շնորհակալություն հայտնեց նախագահ Գյուլին: Նա պաշտպանում էր Դավութօղլուի եւ էրդողանի հայտարարությունները, չարժեր Գյուլին շնորհակալություն հայտնել», ասաց նա:

«Հո մուկ ու կատու չե՞նք խաղալու: Առկախվել է, որ թուրքերին ժամանակ տա: Մենք կորցնելու ոչինչ չունենք: Աշխարհը, գերտերությունները մեզ հետ են, սա մշակված միջոցառում է: Այլ կերպ հնարավոր չէր», ասաց **Կամո Մարգարյանը**:

«Նախագահի ուղերձը ուշացած էր, վաղուց պետք է այս գործընթացը կասեցնեին: Հուսով եմ՝ հաջորդ քայլով ստորագրությունները հետ կկանչեն: Հուսով եմ՝ գործընթացը կդադարեցվի ու Թուրքիան վերջ կտա իր քաղաքական ներկայացումներին: Ձեմ կարծում, որ նախագահը հենց այնպես կասեցրեց այս գործընթացը: Միջազգային կառույցների ճնշում երեւի չի լինի, որովհետեւ նրանք տեսան, թե ով է թելադրում նախապայմանները», նկատեց **Արմինե Գեւորգյանը:**

«Միակ լուծումը դա էր: Նախագահը ժամանակ տվեց մտածելու ոչ միայն Թուրքիային, այլեւ իրեն եւ հայ հասարակությանը: Եթե ոչինչ չստացվեց, նշանակում է՝ պետք է լուրջ մտածենք՝ արդյոք արժե՞ գնալ այդ քայլին», ասաց տնային տնտեսուհի **Սեդա Արեւշատյանը**:

ՀԱՄՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՍՏԱՆՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԸ

Ազգային արխիվը համալրվել է Ցեղասպանության մասին պատմող նոր փաստաթղթերով

Ազգային արխիվը հերթական անգամ պատրաստել է փաստաթղթերի եւ նկարների ցուցադրություն՝ նվիրված Հայոց ցեղասպանության 95-ամյակին: Փաստաթղթերի մի բաժինն ամբողջությամբ նվիրված է բուն Ցեղասպանությանը: Դրանք հիմնականում պատշտոնագրեր են, ստացված ահազանգեր, հոգեւոր առաջնորդների զեկուցագրեր, որոնցում ամենայն մանրամասնությամբ նկարագրված են բուն կոտորածների, տեղահանությունների, գաղթի մասին պատմություններ: Ներկայացված ցուցահանդեսում առանձին բաժին նվիրված է Վանի, Ուրֆայի, Սասունի եւ մի քանի գյուղերի ինքնապաշտպանական մարտերին: Ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանի խոսքերով՝ Ցեղասպանության մասին պատմող շուրջ 12000 փաստաթղթեր ու նյութեր են այս պահի դրությամբ ցուցակագրվել, որոնց մեջ ներառված են մեծ քանակությամբ վկայություններ ու փաստաթղթեր տարբեր պետությունների արխիվներից: ԱԳ փոխնախարար Արման Կիրակոսյանի խոսքերով՝ շատ կարեւոր է նման ցուցադրությունը. «Թուրքիան մեզ մեղադրում է հայտարարություններում, թե մենք փակ ենք պահում մեր արխիվները, չենք հրապարակում եւ այլն: Այս ցուցադրությունը վկայում է, որ մենք բաց ենք, մենք ունենք բավականին շատ փաստաթղթեր Առաջին համաշխարհայինի ընթացքում կատարված հանցագործության մասին»:

Ն. Մ.

ՀԱՄԱՌՈՏ

Երթ դեպի Ծիծեռնակաբերդ

Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան այսօր կկազմակերպի երթ դեպի Ծիծառնակաբերդ: Երթին կմասնակցեն ասոցիացիայի անդամ բոլոր կազմակերպությունների անդամները:

Նմանապես այսօր առավոտյան ժամը 10-ին Արմենական-ՌԱԿ երեւանյան եւ մայրաքաղաքի մերձակա ակումբների անդամները, երիտասարդների առաջնորդությամբ, կբարձրանան Ծիծեռնակաբերդի բարձունքը եւ ծաղկեպսակ կզետեղեն հավերժական կրակի մոտ՝ հարգելով 1,5 մլն նահատակների հիշատակը:

Երեւանում կփակվեն որոշ ճանապարհներ

Ապրիլի 24-ին, ժամը 6.30-ից մինչեւ 24-ը, փակվելու են դեպի Ծիծեռնակաբերդ տանող ճանապարհը Լենինգրադյան-Աբեղյան փողոցների խաչմերուկից մինչեւ Իսակով-Աբեղյան փողոցների խաչմերուկը, Կիլիկիա թաղամասից դեպի Բրազիլիայի հրապարակ տանող, ինչպես եւ Հրազդանի կիրճից դեպի Իսակով-Աբեղյան փողոցների խաչմերուկն ընկած ճանապարհահատվածները:

Ինչպես տեղեկացնում են ոստիկանության մամուլի ծառայությունից, ոստիկանությունը հատուկ անցագրեր չունեցող տրանսպորտային միջոցների վարորդներին խնդրում է նշված ժամանակահատվածում շրջանցել հիշյալ ճանապարհահատվածները:

Լոս Անջելեսում հայ ընտանիքի սպանության մեղադրյալը հայ է

«Ազգ»-ը տեղեկացրել էր, որ մարտի 26-ին Լոս Անջելեսում սպանվել էր 38-ամյա Կարինե Հակոբյանը, հիշեցնենք՝ 2008-ի դեկտեմբերին սպանվել էին Կարինեի ամուսինը՝ Խաչիկ Սաֆարյանը, եւ դուստրը՝ 9-ամյա Լուսինեն: Ինչպես տեղեկացրել էր Լոս Անջելեսի ոստիկանությունը, ենթադրվում էր, որ սպանությունների պատճառը Խաչիկ Սաֆարյանի անձնական կապերն են, նշվում էր նաեւ «սիրային եռանկյունու» մասին:

Այժմ էլ, ինչպես տեղեկացնում է AMGA հեռուստաալիքը, վերոհիշյալ սպանությունների իրականացման մեղադրանքով Լոս Անջելեսում ձերբակալվել է հայազգի Ալբերտ Թերսաջյանը, նշված է նաեւ, որ նա 50 տարեկան է: Առաջմ չկա որեւէ տեղեկատվություն սպանության դրդապատճառների վերաբերյալ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 23/04/2010 22:21 Page 1

ԱԶԳ

Խմբագրական

Այս մեկ տարում վերջին ծանոթ եղանք Թուրքիայի փոխակերպումներին

Փաստորեն ապրիլի 24-ի նախօրեին սառեցնելով հայ-թուրքական արձանագրությունները՝ նախագահ Սարգսյանը մի քանի նապաստակ խփեց մի նետով, բայց չի կարելի ասել, որ բոլոր նապաստակների հարցում էլ ամեն ինչ նորմալ է: Սփյուռքի երեսին պարզճակաս նայելու, ներքաղաքական ինչ-որ սուր անկյուններ կլորացնելու խնդիրները գուցեեւ նա լուծեց , բայց դեռ հայտնի չէ՝ Ցեղասպանության ճանաչման գործընթացը մեծ երկրների ի՞նչ շահերի համաձայնում այսուհետեւ առաջ կընթանա: Սակայն գործընթացը հասել էր ա՛յդ տրամաբանական հանգրվանին:

Զարմանալի են այն մարդիկ, ովքեր ասում են, թե թուրքերի կեցվածքը վաղուց հայտնի էր, եւ պետք չէր, որ Հայաստանը հաշտեցման գործընթաց սկսեր նրա հետ:

Սա մի թեզ է, որին 100 տոկոսով կարելի է չհամաձայնել՝ մի շարք պատճառներով: Նախ ոչինչ չձեռնարկել այն պատճառով, որ գիտես հարեւանիդ վատ բնավորությունը՝ սա արդարացում չէ: Մի որիմիտիվ համեմատություն՝ եթե դռացիդ կռվարար բնավորություն ունի կամ, ասենք, դռանդ մոտ ամեն օր մի հաչող ու կծող շուն է հայտնվում, ուրեմն չպե՞տք է ինքդ դուրս գաս: Հայաստանում կա նոր սերունդ, որը գործնականում պիտի համոզվի, թե ինչպե՞ս կարող է պահել հարեւանը այս պահին, գործնականում, չնայած անցյալի ցավալի իրողություններին: Այսինքն՝ Թուրքիայի անցյալի կերպարին իրազեկ, բայց նաեւ այսօրվա հասատումների կարիքը կա, իսկ այս մեկ տարում վերջին ծանոթ եղանք Թուրքիայի փոխակերպումներին: Դիցուք՝ միշտ ասվում է, թե դիվանագիտությունը հնարավորի արվեստն է: Սակայն ի՞նչ բան է հնարավորը՝ նախ գործնական կյանքում նվաճված բնագիծ: Է, եթե տեսական մակարդակից էմպիրիկ ոլորտ չմտնենք, ինչպե՞ս պետք է հնարավորն իրականություն դարձնենք: Այսինքն՝ այս մեկ տարին բոլորին՝ ե՛ւ սովորական ժողովրդին, ե՛ւ մեր դիվանագետներին, ե՛ւ երկրի կառավարիչներին բավական օժտեց այնպիսի էմպիրիկ իմացությամբ, որ աղագայում, այսինքն՝ երկու-երեք կամ ավելի տարի հետո հայ-թուրքական հարաբերությունների նոր ռաունդի վերականգնումից հետո արդեն սովորած կլինեն այժմ արված տակտիկական սխալներից, կիսաս մնացած կետից կշարունակեն եւ ոչ թե զրոյից կսկսեն: Եվ բացի այդ՝ այս մեկ տարին ամեն օր լայնածավալ տեղեկատվական հոսքի մեջ նույնիսկ վերջին տառաձանաչ մարդը Հայաստանում շատ բան իմացավ հայ-թուրքական գործընթացների, Կարսի պայմանագրի, Ցեղասպանության ճանաչման գործընթացի մասին այս առիթով: Մի թարմ անեկդոտ էր պտտվում խորհրդարանի միջանցքներում, որ ասածիս արձագանքն է. արձանագրությունները Ցյուրիխում ստորագրելու հաջորդ օրը մեր «ախոյեական» պատգամավորներից մեկը նստում է իր «Համերը», զորագունդը (իմա՝ թիկնապահներին) գցում հետեւը, թե՝ քշում է հայ-թուրքական սահման: Մի ուրիշ «ախոյեական» հետաքրքրվում է, թե ինչո՞ւ. «Ո՞նց թե ինչու, ասին՝ թուրքերը 1,5 մլն հայ են կոտորել, գնամ-դրանց հերն անիծեմ»: «Այ մարդ, դա 15 թվին է եղել», տեղեկացնում է երկրորդը. «Ես նոր իմացա», պատասխանում է էս մեր «Համեր»-ավորը: Սա մի քիչ չափազանցություն է, բայց արտացոլում է գործընթացի տեղեկատվական-իրազեկային դրական ասպեկտը ոչ միայն ներհայկական, այլեւ ողջ աշխարհի մակարդակով՝ Հայաստանի եւ հայերի, Հայոց ցեղասպանության մասին խոսելու առիթները շատ էին: Մնացյալը՝ թե իշխանությունն իր սխալ լինելը գիտակցեց եւ այլն ՝ սա պարզապես նստելու ու ոչինչ չանելով ուրիշին քննադատելու ոլորտից է: Ընդ որում՝ Հայաստանն, իհարկե, մենակ չէր կարող այս որոշմանը հանգել եւ, փաստորեն, Սերժ Սարգսյանն իր ուղերձում չթաքցրեց այդ հանգամանքը՝ նշելով իր խորհրդակցությունների մասին՝ Օբամայի, Մեդվեդեւի, Սարկոզիի հետ: Իսկ որ գործընթացից դուրս չենք գալիս, այլ այս պահի հարաբերություններն են սպառված՝ ահա այս թեման է, որ շարունակելու է օրակարգում պահել Հայաստանի քաղաքական դաշտի մի մասին, իսկ տարածաշրջանում շահեր ունեցող պետություններին՝ օգտվել սառած հարցից ով ինչպես կարող է (սա է գուցե վտանգը): Ի վերջո տարածաշրջանում շահեր ունեցող իսկաները եւս Թուրքիայի ականջը բաշելու խնդիր ունեն եւ Հայաստանի՝ կարգավորման գործընթացից հետ քաշվելով՝ այդ հնարավորությունը սացան, ընդ որում ցեղասպանության ճանաչումը միշտ էլ կարող է դագաղակ դառնալ Թուրքիայի համար, որը թեեւ անցած տարի հայտարարում էր, թե տարածաշրջանում կայունության պլատֆորմ է առաջարկում, բայց պլատֆորմի տակ ԼՂ խնդրին խառնվելու մտադրությունն էր պարզապես ատամի տակ եւ հիմա էլ այդ մտքից ձեռ չի քաշում:

Երեւի պատահական չէին նաեւ սառեցումն ապրիլի 24-ից մեկ օր առաջ հայտարարելն ու ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի խոսնակի հաստատակամության բարձրաձայնումը՝ 252 բանաձեւը ընդունելու վերաբերյալ: Թուրքերն ընտրություն պետք է կատարեն՝ իրենց հանդեպ կիրառվելիք կոշտ դրսեւորումների (Թուրքիան Եվրոպայի դռներն է ուզում, չէ՞, թակել) եւ արձանագրությունների վավերացման միջեւ:

Ներքաղաքական առումով էլ հիմա Ս. Սարգսյանի ընդդիմախոսները տխրել են, որ այս քայլով նախագահն իր վրայից հեռացրեց քննադատական հոսքի մի բավական մեծ դոզա, եւ ներքին քաղաքական լարվածությունը նրա շուրջը թերեւս նվազի: Հետաքրքրական մի անտրամաբանությամբ քաղաքական գործիչներից եղել էին, որ նախագահի՝ սպասվելիք ուղերձին հղում անելիս ենթադրել էին, թե միգուցե նա ասելու է իր հրաժարականի մասին. պարզ է, որ սա հուշվել է արտաքին քաղաքական շրջանակներից, եթե որպես միայն ցանկություն՝ էլի ոչինչ, բոլորս ամեն տեսակի ցանկություններ կարող ենք ունենալ՝ երազելն օգտակար է առողջության համար: Իսկ եթե սա քաղաքական կանխատեսում էր, խոսում է մեր քաղաքական մտքի խեղճության մասին, քանի որ քաղաքական միտքը գոնե 60 տոկոսանոց կանխատեսելիությամբ պետք է օժտված լինի, որովհետեւ քաղաքական զարգացումներ (խոսքը բնականոն հերթագայությունների մասին է)՝ նշանակում են իրար հաջորդող տրամաբանական գործընթացներ, որոնք կանխատեսելը մեր քաղաքական գործիչների ու քաղաքագետների համար պետք է եթե ոչ մեկին-մեկ, գոնե 60-70 տոկոսանոց ճշտությամբ լինի:

Իսկ այն մտքին, որ արտահայտել է երեկ Ռաֆֆի Հովհաննիսյանը, թե Հայաստանը հիմա գտնվում է այնպիսի արտակարգ վիճակում, որ առաջիկա ամիսների ընթացքում այն կարող ենք հաղթահարել կամ նոր ընտրություններով, կամ շրջադարձային-բեկումնային փոփոխություններով, որի համար էլ քաղաքական կամք է պետք, համաձայն ենք. այո, երկրի ղեկավարությունը քաղաքական կամքի անհրաժեշտությունն ունի՝ էապես փոխելու Հայաստանի ե՛ւ ներքին, ե՛ւ արտաքին վիճակը, ու նախ եւ առաջ ներքին, քանի որ օրինականությամբ, արդարությամբ, եւ տնտեսական գոնե մի փոքր բարելավված վիճակում Հայաստանն առավել լավ մեկնարկային դիրքում կլինի արտաքին խնդիրները լուծելիս:

ՄԱՔԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԻԵՎՆՈՒՅՆ ՅԱՌԱՊԱՆԻ ՁՈՇԵՐ

Ասորիները աշխարհից պահանջում են ընդունել ասորական ցեղասպանությունը

Հայաստանի ասորական համայնքում ավանդույթ կա՝ ապրիլի 24-ին բարձրանալ Ծիծեռնակաբերդի բարձունք՝ հարգելու 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Ասորիները քիչ արցունք եւ արյուն չեն թափել: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում եւ Հյուսիսային



Պարսկաստանում թուրքերը սպանել են 750.000 ասորիների:

«Աշխարհը պետք է դատապարտի Թուրքիային՝ Հայոց ցեղասպանության համար, եւ ընդունի, որ ասորիները նույնպես ենթարկվել են ցեղասպանության: Եթե հայերը կորցրել են 1,5 մլն մարդ, ապա ասորիները՝ բնակչության շուրջ կեսը՝ 750.000: Հայոց ցեղասպանությունն ավարտվեց 20-ական թթ., ասորիների ցեղասպանությունը շարունակվում է մինչ օրս», «Հայելի» ակումբում ասաց Հայաստանի ասորական համայնքի ներկայացուցիչ Ռազմիկ Խնկարեանը:

Ասորիների ցեղասպանության մասին շատ չեն խոսում, սակայն ժամանակները փոխվել են: Պետականություն չունեցող, բայց աշխարհում արդեն երեք միլիոն կազմող ասորիները Թուրքիայից պահանջներ ունեն: «Ճանաչելով ՄԱԿ-ի ազգերի ու ժողովուրդների իրավահավասարության եւ ազատ ինքնորոշման սկզբունքը, Թուրքիան ոտնահարում է տեղի ասորիների իրավունքները եւ շարունակում իրականացնել ցեղասպանություն՝ արտաքսելով ասորիներին», նկատում է Խնկարեանը: Ասորիներն իրենց նահատակներին հարգանքի տուրք են մատուցում օգոստոսի 7-ին: «1933 թ. Իրաքի Սիմել գյուղում տեղի ունեցավ կոտորած: Անգլիացիները մեկ օրում կոտորեցին եւ այրեցին 3000 ասորիների», պատմեց Խնկարեանը:

Ասորական համայնքի ներկայացուցիչ Լինա Յակուբովան 8 վավերագրական ֆիլմերի հեղինակ է: Նրանցից 4-ը պատմում է ասորական ցեղասպանության մասին: «Մեկ ազգի մոռացված մի էջ» ֆիլմի նկարահանման ժամանակ ռեժիսորը հասկացավ, որ ասորիները մեղավոր են իրենց ազգի նկատմամբ Ցեղասպանության ճանաչման պահանջը խստորեն չառաջադրելու համար: «Մեր մեղավորությունն է, որ մարդիկ չգիտեն այդ մասին», ասաց նա:

Հ. Հ.

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Ռիկարդո Միգլիորիին

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանն ապրիլի 23-ին ընդունել է ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովում Իտալիայի պատվիրակության ղեկավար, խորհրդարանի անդամ Ռիկարդո Միգլիորիին:

Ռիկարդո Միգլիորին տեղեկացրել է, որ պատրաստվում է ապրիլի 24-ին այցելել Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Արթուր Բաղդասարյանը շնորհակալություն է հայտնել Ռիկարդո Միգլիորիին 1915 թվականին Թուրքիայում ցեղասպանության ենթարկված մեկուկես միլիոն հայերի հիշատակը հարգելու համար՝ նշելով, որ միջազգային հանրության կողմից հայոց ցեղասպանությունը դատապարտելը կկանխի աշխարհում նոր ցեղասպանությունների իրականացումը:

Հյուրի խնդրանքով Արթուր Բաղդասարյանը ներկայացրել է Հայաստանի դիրքորոշումը հայ-թուրքական հարաբերությունների հետ կապված վերջին զարգացումների, ինչպես նաեւ՝ ԼՂ հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ: Երկուստեք կարեւորվել է կովկասյան տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատումն ու պահպանումը:

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ

Մինսկի խմբի երկրները զգում են հայ-թուրքական գործընթացին նոր լիցք հաղորդելու անհրաժեշտությունը

1-ին էջից

Այլ կերպ, որքան էլ չիմանանք ՀՀ նախագահի հանդիպումների բովանդակությունը, ամենայն հավանականությամբ դրանք պետք է նպաստեին արձանագրությունների վավերացումը կատարելու հայկական կողմի որոշմանը: Ինչո՞ւ: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ միջազգային լայն արձագանք գտած այդ որոշումը տարբեր երկրներում տեղիք է տվել տարաբնույթ մեկնաբանությունների: Թուրքիայում որոշ շրջանակներ, ի դեմս նախկին դեսպան Օմեր Էնգին Լյութեմի, դա մեկնաբանել են Ապրիլի 24-ի ուղերձից առաջ նախագահ Օբամային ուղղորդելու եւ թուրքական կողմի վրա ճնշում գործադրելու դրսեւորում, կամ ներքաղաքական հաշվարկներով պայմանավորված նկատառում:

Ի դեպ, այս կարծիքները հնչեցին թուրքական հանրայինի TRT-Turk հեռուստաալիքի ուղիղ եթերով հեռարձակված հաղորդմանը, որին հեռախոսով Լյութեմի հետ մասնակցեց նաեւ տողերիս հեղինակը, բացառելով արձանագրությունների ընթացակարգը կատարելու հայկական կողմի որոշման առնչությունը ներքաղաքական նպատակներին:

Պարզապես հաղորդավարի ուշադրությունը հրավիրեցինք նախագահներ Օբամայի, Սարկոզիի եւ Մեդվեդեւի հետ ՀՀ նախագահի որոշմանը նախորդող հանդիպումների վրա, ընդգծելով, որ նրանք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարներն են, նրանց է պատկանում քարաբաղյան հակամարտության կարգավորման նախաձեռնությունը, այս երկրները կտրականապես մերժում են Լեռնային Ղարաբաղի եւ Հայոց ցեղասպանության հետ կապված որեւէ նախապայմանի առաջադրումը հայկական կողմին եւ անընդունելի են համարում հայ-թուրքական նորմալացման գործընթացի շաղկապումը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի հետ, եւ այդ մասին Վաշինգտոնում՝ նախագահ Օբաման, իսկ Մոսկվայում՝ վարչապետ Պուտինն ու նախագահ Մեդվեդեւը պարզորոշ ասել են վարչապետ Էրդողանին:

Այնուհետեւ ավելացրել ենք. «Հետեւաբար արձանագրությունների վավերացման ընթացակարգը կատարելու հայկական կողմի որոշումը ոչ թե պիտի համարվի Ապրիլի 24-ի նախօրյակին ԱՄՆ նախագահի վրա ազդելու դրսեւորում, որովհետեւ Հայաստանը չունի դրա կարողությունը, այլ արձանագրությունների վավերացման համար Հայաստանին համառորեն առաջադրվող թուրքական նախապայմանների հակազդեցությունը, որոնք հակասում են կողմերի ստանձնած պարտավորություններին»:

Միաժամանակ ընդգծել ենք, որ անկախ արված հայտարարություններից, չգիտենք ինչպես Սարգսյան-Էրդողան, այնպես էլ նախագահ Օբամայի հետ նրանց հանդիպումների բովանդակությունը, ուստի դեռ վաղ է արձանագրությունների մասին հայկական կողմի որոշումը մեկնաբանելու համար, թերեւս մեկնաբանության առումով որոշակի պակերացում կա Վաշինգտոնի հայտարարությունը, որն այդ պահին արված չէր:

Երեկ ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Ֆիլիպ Քրոուլին արեց այդ հայտարարությունը, ասելով, որ Հայաստանի նախագահի ուղերձն իրենց չի զարմացրել, իրենք նախապես գիտեին արձանագրությունների վավերացման ընթացակարգի կատարման մասին, եւ ողջունեց Սերժ Սարգսյանին՝ գործընթացից դուրս չգալու համար:

Նա միաժամանակ բացառեց արձանագրությունների վավերացումը կատարելու ՀՀ նախագահի որոշման առնչությունը դրանից երկու օր առաջ տեղի ունեցած Սարգսյան-Մեդվեդեւ հանդիպման հետ: Մոտավորապես նույն կերպ արտահայտվեց նաեւ Ֆրանսիայի նախագահ Սարկոզին: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ Մինսկի խմբի համանախագահող երկրները հետամուտ են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացմանը, շարունակում են թուրքական նախապայմանները համարել նորմալացման ճանապարհի ամենամեծ խոչընդոտը, նորմալացման գործընթացի շաղկապումը ղարաբաղյան հակամարտության հետ դիտարկում են իբրեւ ոտնձգություն կարգավորման Մինսկի խմբի նախաձեռնությանը եւ զգում են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացին նոր լիցք հաղորդելու անհրաժեշտությունը: Այլապես ՀՀ նախագահի որոշումը ոչ թե հավանության կարժանանար, այլ կբախվեր միջազգային այս ուժերի հակազդեցությանը:

AZG NEW PDF.qxd 23/04/2010 22:22 Page 1

Օտար մկնդեղներ

«Ճշմարտության ժամանակն է»

Համաշխարհային մամուլը՝ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի մասին

Հայոց ցեղասպանության փաստը եղել է համաշխարհային մամուլի ուշադրության կենտրոնում: Դեռևս 1979-ին ամերիկյան The New York Times պարբերականն անդրադարձավ 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի ջարդերին ու տեղահանությանը եւ հոդվածում մի քանի անգամ կրկնեց «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունը: Այդ արտահայտությունը հետագայում օգտագործեցին նաեւ այլ հեղինակավոր լրատվամիջոցներ, որոնք արդեն մի քանի տասնամյակ վերլուծական հոդվածներ են գրում Հայոց ցեղասպանության մասին: Միայն նախորդ տարի ամերիկյան մամուլում հրատարակվել է ավելի քան 100 հոդված 1915-ի վերաբերյալ:

Ապրիլ ամսին համաշխարհային վարկանիշ ունեցող պարբերականների հոդվածները՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ, կրկին ստիպեցին Թուրքիային սարսափել ապրիլի 24-ից: ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում 252-րդ բանաձեւի ընդունումը, Շվեդիայի խորհրդարանում Ցեղասպանության ճանաչումը եւ Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ 100.000 հայերին վտարելու մասին հայտարարությունները ստիպեցին արեւմտյան լրատվամիջոցներին առավել բուռն ու բովանդակալից անդրադառնալ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին:

Ապրիլի սկզբներին The Guardian պարբերականում տպագրվեց ծավալուն հոդված՝ հայ-թուրքական հարաբերությունների ներկայիս փուլի վերաբերյալ: Ամփոփելով հարաբերությունները՝ հետաքրքրական հետեւություն է անում հոդվածագիրը: «Թուրքիան հայտնվել է ներկայիս իրավիճակում, քանի որ այդպես էլ չի ցանկացել իր համար պարզել, թե 1915-ին ինչ է տեղի ունեցել Օսմանյան Թուրքիայում բնակվող հայերի հետ: Գաղափարը, որ իրենց նախնիները Ցեղասպանություն են իրականացրել, ծայրաստիճան նյարդայնացնում է թուրքերին այն պատճառով, որ այդ երկրում պատմական ճշմարտությունը պարզելու հնարավորություն չկա: Դասագրքերը խեղաթյուրված են, իսկ քաղաքական գործիչները ձայներ կորզելու համար պատրաստ են գործի դնել ազգայնականներին», գրում է թերթն ու հավելում, որ թուրքերին անհրաժեշտ է վերլուծել անցյալի սխալները, անունը մաքրել արյունից:

«Ինչպես այս օրերին պնդում են Երեւանում, Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն անդառնալի բնույթ է ստացել: Նման հայտարարությունները չափազանց լավատեսական են, եթե հաշվի առնենք Թուրքիայում առկա լուրջ երեւույթները: Մի քանի տեղացի պատմաբաններ, փաստաբաններ եւ իրավաբաններ առաջատար թուրքական թերթերին տված հարցազրույցում իշխանություններին կոչ են արել դեմ չգնալ հոսանքին, ճանաչել 19-րդ դարի վերջին սկսված հայերի զանգվածային սպանությունների եւ տեղահանման փաստերը, որոնց գագաթնակետը դարձավ 1915-ը, եւ վերջապես դնել թուրքական պետության այդ ողբերգական էջին», գրում է ռուսական «Նեզավիսիմայա գազետա» պարբերականը՝ հավելելով, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ թե հայ կամ թուրք ժողովրդի, այլ ողջ մարդկության խնդիրն է:

Ամերիկյան The Daily Reveille պարբերականը «Ճշմարտության ժամանակն է» խորագրով հոդվածում հիշեցնում է, որ նահանգապետի պաշտոնում Բարաք Օբաման նախընտրական քարոզարշավի ժամանակ խոստացավ նախագահի ընտրվելու դեպքում ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

«Սակայն երբ բանաձեւը Կոնգրեսում էր, Օբաման եւ Քլինթոնը ամեն ջանք գործադրում էին խափանելու քվեարկությունը: Խնդիրն այն է, որ բանաձեւը անդրադառնում է ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններին եւ վտանգում Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերություններ հաստատելուն ուղղված ջանքերին»: Հոդվածագիրը գրում է, որ թեպետ Ցեղասպանությունը տեղի է ունեցել մեկ դար առաջ, սակայն պատմական հանցագործության ճանաչումը շատ կարեւոր է, որպեսզի դատարտվեն ապագայում կատարվելիք նույնատիպ հանցագործությունները:

«Ճշմարտության ժամանակն է: Ժամանակն է՝ հիմնվելով փաստերի վրա, դատապարտելու Հայոց ցեղասպանությունը: Ապագայում մենք կրկի՞ն թիկունքով կշրջենք, երբ մեր երեխաները, մայրերն ու հայրերը դանակներով անդամահատվեն: Որքա՞ն ժամանակ պետք է անտեսենք դեպի մահ տարված, վաճառքի հանված կամ ծովում խեղդված երեխաների, հայրերի եւ մայրերի աղաղակները», գրում է թերթը:

Գերմանական Spigel Online պարբերականն էլ տիկին **Տիգրանուհի Ավետիսյանի** պատմությամբ է սկսում Հայոց ցեղասպանության 95-ամյա տարելիցին նվիրված «Անցյալի սատանաները» հոդվածը:

«Այս շաբաթ կլրանա Տիգրանուհի Ավետիսյանի 100-ամյակը: Երկու տարի առաջ նա դադարեց կրել ակնոցներ, երբ վերջնականապես կորցրեց տեսողությունը: Այժմ նա ապրում է Երեւանի բարձրահարկ շենքերից մեկի 7-րդ հարկում: 92 տարի առաջ նա թաքնվել էր գյուղի նկուղներից մեկում, փողոցի մի անկյունում ընկած էր փոքրիկ տղայի խոշտանգված դիակը: Հարեւան տանը կանանց էին բռնաբարում, եւ 8 տարեկան աղջիկը սարսափով էր լսում կանանց ճիչերը», գրում է թերթը:

«Կան լավ եւ վատ թուրքեր: Վատ թուրքերը սպանեցին այն տղային, իսկ լավ թուրքերը ինձ եւ մորս թաքցրին, հետո օգնեցին փախչել», մի կերպ արտաբերում է Տիգրանուհին»:

Այնուհետեւ հոդվածագիրն անդրադառնում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: «Ապրիլի 24-ին կլրանա Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցը: Մինչ այսօր Թուրքիան շարունակում է հերքել Օսմանյան կայսրությունում իրականացրած Ցեղասպանությունը: Գերմանիան էլ չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: 2005թ. Բունդեսթագը Թուրքիային դիմեց՝ ճանաչելու պատմական արտասովոր անցյալը, սակայն նրանք խուսափեցին «ցեղասպանություն» բառի օգտագործումից:

1915-1918թթ. հայ ժողովրդի մի մասը բնաջնջվեց, մյուս մասը դարձավ թափառական եւ տուն փնտրեց ողջ աշխարհում՝ այդպիսով ձեւավորելով հայկական սփյուռք հասկացությունը: Այս շաբաթ գերմանացի հասարակությունը հարգանքի տուրք կմատուցի հայ ժողովրդին, կրկին ցուցադրելով «Աղետ» ֆիլմը», գրում է գերմանական հանդեսը:

04/08/2010 Spigel Online

Demons of the Past

The Armenian Genocide and the Turks

By Benjamin Bidder, Daniel Steinvorth and Bernhard Zand

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռուսաստանի ճանաչած Հայոց ցեղասպանությունը

Տասնհինգ տարի առաջ՝ 1995-ի ապրիլի 14-ին ռուսական Պետդուման միաձայն ընդունեց Հայոց ցեղասպանության եղելությունը: Ընդունվեց հայտարարություն՝ «1915-1922-ին հայ ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանությունը դատապարտելու» մասին, եւ, ի արձագանք Ցեղասպանությունն ընդունած այլ 19 երկրների, Ռուսաստանի ընդունած բանաձեւը ձեւակերպումների հարցում բավական դիպուկ է գտնվել. «Հիմնվելով 1915-22-ին Արեւմտյան Հայաստանի տարածքում հայերի կոտորածի, բռնի արտաքսման մասին բազմաթիվ, անբեկանելի փաստերի վրա՝ Ռուսաստանի Պետդուման ճանաչում է Հայոց ցեղասպանությունը՝ իրականացված նույն տարածքում»: Դիպուկն այստեղ «Արեւմտյան Հայաստանն» է, այլ երկրների՝ «Օսմանյան կայսրության» փոխարեն:

Սակայն ի՞նչ է կատարվում այսօր Ռուսաստանում Ցեղասպանության վերաբերյալ բանաձեւի հետ՝ ընդունումից 15 տարի անց: Պատասխանը ակնհայտ է՝ գրեթե ոչինչ: Ռուսաստանը ոչ մի քայլ չի ձեռնարկել եւ չի ձեռնարկում իր իսկ ընդունած բանաձեւին իրավական հիմնավորումներ տալու ուղղությամբ: Դաշնային ոչ մի ալիքով չես տեսնի որեւէ հաղորդում, ֆիլմ այս թեմայով, միայն երբեմն ապրիլի 24-ին, այն էլ ոչ հեռուստատեսային «պիկ ժամերին»: Ռուսական պատմության դասագրքերը նույնպես չեն բարձրաձայնում Ցեղասպանության թեման: Ապրիլի 24-ը Պետդուման այդպես էլ չի մտցրել «հիշարժան օրերի» ցանկում՝ որպես Ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Իսկ այլ երկրներում, օրինակ, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, հիշեցնեմ՝ նույնիսկ Բրեժնեւ հետաքրքրել է Հայոց ցեղասպանության հարցակապակցությունը: Այլ երկրներում գոնե ապրիլի 24-ին կազմակերպվում են սգո միջոցառումներ, երթեր, հիմնվում են հուշակոթողներ: Ռուսաստանում, սակայն, եթե հայերը (ավելի ճիշտ՝ «կովկասցիները»-Հ. Ա.) փորձեն զանգվածային միջոցառում անել, թեկուզ ապրիլի 24-ին ... ոստիկանությունը «կարգին փող կաշխատի»: Ինչ վերաբերում է Ցեղասպանության հուշակոթողին, ապա միայն այն բանից հետո, երբ Ռուսաստանի հայերի միությունը հայտարարեց, որ պատրաստակամ է հոգալ ստեղծվելիք հուշակոթողի բոլոր ֆինանսական ծախսերը, Մոսկվայի իշխանությունները որոշեցին քննարկել դրա կառուցման հավանականությունը: Ուրեմն ինչո՞ւ Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանը, որի հույժ կարեւոր շահերը կովկասյան տարածաշրջանում անվերապահորեն պաշտպանում է միայն մեր երկիրը, ավելի «համարձակ» չի գտնվում իր իսկ ընդունած հայանպաստ որոշումները իրագործելիս: Պատճառը դարերի խորքում է թաքնված: Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը բոլոր ժամանակներում էլ թույլ չեն տվել նրան ավելի ջերմ խոսել «եղբայր հայերի» մասին: Երբ առաջացավ Կովկասի սովետականացման խնդիրը, առաջացավ նաեւ անհրաժեշտություն՝ ստեղծելու դաշինք Քեմալական Թուրքիայի եւ Սովետական Ռուսաստանի միջեւ, իսկ այս դաշինքն արդեն անվավեր ճանաչեց 1920-ի օգոստոսի 10-ին կնքված Սեւրի պայմանագիրը՝ սրանով իսկ դեպի Արեւմտյան Հայաստան Հայաստանի ձգտումները անիրականանալի դարձան, եւ սկսվեց Հայաստանի սովետականացման գործընթացը: Այս գործընթացն իր հերթին բերեց 1921-ի մարտի 16-ին Մոսկվայի եւ 1921-ի հոկտեմբերի 13-ին Կարսի պայմանագրերի ստորագրմանը. սրանցով Սովետական Ռուսաստանը եւ նրա դրածոները Սովետական Հայաստանում Թուրքիային հանձնեցին 20 հազար քառակուսի կիլոմետր հայկական տարածք՝ փաստորեն իրականացնելով Հայաստանի մասնատումը: Ավելին՝ հենց այս պայմանագրով Ադրբեջանի կազմ, դե յուրե, անցավ հայկական Նախիջեւանը: Ընդ որում, եթե սկզբում Սովետական Ռուսաստանը «աչք էր փակում» ցարական Ռուսաստանի Ելիզավետպոլյան գավառի հայաբնակ շրջանների հանձնմանը նախկինում պետականություն չունեցած Ադրբեջանին, ապա հետագայում արդեն նույն Սովետական Ռուսաստանն ինքն իր ձեռքով Ադրբեջանին հանձնեց Լեռնային Ղարաբաղը: Հետեւաբար ամենեւին էլ տարօրինակ չէ, որ Սովետական Միության իրավահաջորդ հռչակված Ռուսաստանի Դաշնությունը դժվարությամբ կարող է անվերապահ, արդարացի վերաբերմունք ցուցաբերել ԼՂՀ-ի գոյությանը (սա հո Հարավային Օսիա կամ Աբխազիա չէ՞-Հ. Ա.): Դժվարությամբ կարող է բարձրաձայնել, որ այն բանից հետո, երբ 1988-ի հուլիսի 18-ին ԼՂԻՄ մարզային խորհուրդը որոշում կայացրեց Սովետական Ադրբեջանի կազմից դուրս գալու մասին, Հայոց ցեղասպանության շարունակությունը տեղի ունեցավ. 1988-ի նոյեմբերի 21-27-ին՝ Կիրովաբադում, 1990-ի հունվարի 13-19-ին՝ Բաքվում, իսկ ավելի վաղ՝ 1988-ի փետրվարի 26-29-ին՝ Սումգայիթում: Ռուսաստանն, առավել, քան որեւէ այլ երկիր, գիտի, որ այս ամենի պատճառով Ղարաբաղի ազգաբնակչության մեծամասնությունը՝ հայերը, բնաջնջման վտանգ զգալով, պայքարի ելան, եւ հենց այդ ժամանակ էր, որ Թուրքիան, օգտվելով առիթից, միակողմանի փակեց Հայաստանի հետ սահմանը՝ նաեւ ռազմական օգնություն ցուցաբերելով Ադրբեջանին: Ռուսաստանը նաեւ պետք է լավ իմանա, որ 1991-ի սեպտեմբերի 2-ին հռչակված ԼՂՀ անկախությունն ամենեւին էլ ինքնաբուխ կամ «նորաձեւությանը տուրք» չէ, այլ՝ արդարության վերականգնման փորձ: Նույնիսկ ԽՍՀՄ վերջին առաջնորդ **Միխայիլ Գորբաչովը** վերջերս հայտարարեց, որ ինքը ժամանակին առաջարկում էր ԼՂԻՄ-ին տալ հանրապետության կարգավիճակ: Իսկ եթե պատ, ապա ո՞ւր կկորեին Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահանջները, երբ Ղարաբաղը միութենական մյուս՝ 15 հանրապետությունների հետ, համաձայն սովետական երկրի սահմանադրության, դուրս գար Միությունից՝ որպես անկախ պետություն:

Այսօրվա Ռուսաստանում այս ամենը շատերը գիտեն, կան նաեւ այնպիսիք, որ համարձակ, առանց հաշվի առնելու Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը, բարձրաձայնում են: Ռուս գրող, հրապարակախոս **Վիկտոր Կոնոպլեվը** վերջերս հրապարակած հոդվածում նշում է, որ 1995-ին Պետդումայի ընդունած որոշումից դուրս են մնացել «Արեւմտյան Հայաստանում՝ Սասունում, Տրապիզոնում, Էրզրումում, Կիլիկիայում, Ադանայում 1894-1909-ին իրականացված հայերի ջարդերը: Մենք չենք բարձրաձայնում նաեւ այն մասին, որ հայերը ենթարկվել են նաեւ մշակույթային, կրոնական ցեղասպանության ոչ միայն թուրքերի կողմից, այլ նաեւ, էսպաֆետը վերցրած՝ Ադրբեջանի կողմից. միայն 1920-ին Շուշիում 10 հազար հայեր կոտորվեցին», նշում է Կոնոպլեւը: Ռուս գրողը շեշտում է, որ այսօր Ռուսաստանն, առավել քան երբեք, պետք է պաշտպանի իր «հայ եղբայրներին», «Մենք պետք է օգնենք հայերին՝ վերականգնելու պատմական արդարությունը, բայց ոչ թե «չգործող բանաձեւեր» ընդունելով, այլ աղմկոտ քայլերով, գործողություններով: Ես չեմ ուզում հավատալ, որ Ռուսաստանը Ցեղասպանությունը լոկ ձեւի համար է ընդունել՝ որպես վաղուց կատարված փաստ: Հայերենում այսպիսի խոսք կա՝ «ցավդ տանեմ», ժամանակին հայերն այն ուղղում էին մեզ՝ մեր գործերի, օգնությունների համար, այսօր ժամանակն է, որ վերականգնվի «ցավդ տանեմը» հայերի ու ռուսների միջեւ՝ փոխադարձության հիման վրա», եզրափակել է Վիկտոր Կոնոպլեւը:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

AZG NEW PDF.qxd 23/04/2010 22:22 Page 1

Մինչեւ այսօր էլ այս ցեղասպանությունն ուրանում են ոճրագործներն ու նրանց սերունդները: Թեմայի հրապարակային արծարծումը Թուրքիայում շատերի համար կյանք է արժենում. 2007-ի հունվարի 19-ին Հրանտ Դինքի սպանությունը փաստեց սա: Ի հեճուկս պատմագիտությամբ զբաղվող միջազգային ճանաչված հեղինակությունների՝ ցեղասպանություն եզրաբառով բնորոշմանը, Թուրքիայի քաղաքական ղեկավարությունն այսօր էլ անդրդվելի է իր ժխտողական դիրքերում: Հայոց ցեղասպանությունը ճանաչելու փոխարեն Էրդողանը դեռ նույնն է պնդում՝ փաստեր: Իսկ Թուրքիայում շատերն ուզում են իրենց երկրի նոր պատմությունը գրել: Դինքի թաղմանը 200 000 թուրքեր փողոց են ելել հանրահավաքի արդարության պահանջով՝ ցույց տալով իրենց համերաշխությունը հայերին: Կայզերական Գերմանիան հանդուրժում էր ոճիրը՝ Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության

«Աղեն». Անցյալի վավերագրություն՝ ներկայի ձայնով

Ինչպես իրազեկել ենք մեր ընթերցողներին, գերմանական հեռուստատեսության առաջին ալիքը՝ ARD-ն, ապրիլի 9-ին հեռարձակեց Էրիկ Ֆրիիդլերի 90 րոպեանոց վավերագրական ֆիլմը՝ «Աղեն՝ մի ցեղասպանություն» վերնագրով: Գերմանիայում եւ այլուր մեծ տպավորություն եւ արձագանքի ալիք առաջացրած ֆիլմը ապրիլի 13-ին վերահեռարձակվեց գերմանական «Phoenix» հեռուստաալիքով, որին հաջորդեց հրապարակային բանավեճ գերմանացի, հայ եւ թուրք ներկայացուցիչների միջեւ, որի ամփոփ շարադրանքը «Ազգ»-ը ներկայացրեց ապրիլի 21-ին, Գերմանիայում մեր թղթակից Անահիտ Հովսեփյանի անխոնջ գրիչով, արժանանալով մեր ընթերցողների գնահատանքին: Մեր խնդրանքով, Ա. Հովսեփյանը պատրաստել է նաեւ ֆիլմի հակիրճ նկարագրությունը, որը ընթերցողների ուշադրությանն ենք հանձնում ստորեւ եւ հաջորդ էջում:

Ավստրալիայում ծնված Էրիկ Ֆրիիդլերը 2002-ից NDR-ի (Հյուսիս-Գերմանական ռադիո) խմբագիրն է: Վավերագրական, հեռուստատեսային եւ խաղարկային ֆիլմերի հեղինակ: Ինչն է առիթ հանդիսացել, որ Հայոց ցեղասպանությանն անդրադառնա: Ռաֆայել Լեմկինը այն համարել է 20-րդ դարի առաջին սիստեմատիկ ցեղասպանությունը, մեկնակետ հետագա բոլոր ցեղասպանությունների համար, որ ցնցեցին 20-րդ դարը: Այս ցեղասպանությունն ուրանում են ոչ միայն ոճրագործների սերունդները, այլեւ աշխարհի մեծ մասը պարզապես լռության է մատնել այն, պարզաբանում է ֆիլմի հեղինակը: Ամերիկացի կոնգրեսական Ադամ Շիֆը «Աղեն» ֆիլմում հարց է ուղղում՝ ինչո՞ւ աշխարհի եւ ոչ մի վարչակազմ խնդիր չունի, երբ խոսում է Ռուանդայի, Կամբոջայի կամ Հոլոքոստի մասին, բայց Հայոց ցեղասպանության մասին դիվանագետները գրեթե 100 տարի ձեռնոպահ են մնում արտահայտվելուց: Մեզ հետաքրքրում է՝ ի՞նչ է եղել ժամանակին եւ ինչո՞ւ մի իրադարձություն, որ պատմաբանների հարաճուն գնահատմամբ վաղուց ապացուցել է իր փաստացիությունը, մինչ օրս լուրջ չի ընկալվել: Ես մտածում էի՝ ինչպե՞ս պիտի վաղեմի իրադարձությունները կենսագրության միջոցով: Բայց ֆիլմի նախագիծը ցնցել է իրեն, որ պատմության այսպիսի կարեւորագույն հատվածը գրեթե չի արժանացել ֆնության, ուշադրության: «Թուրքական կառավարությունը մինչեւ օրս էլ շատ զգայուն է այս թեմայի հանդեպ: Նա չի ուզում տեղահանությունն ու ցեղասպանությունը ճանաչել եւ ձեւացնում է, թե սա իր պատմությունը չէ: Ասում է, թե կատարվածը երկիրը պաշտպանելու անհրաժեշտ միջոցառումներ էին: Սոցիոլոգ Գուննար Հայնզոհնը ինձ ճշգրիտ հուշեց. «Ով ուրանում է ցեղասպանությունը, հայտնվում է արտասովոր բարոյական պարադոքսի մեջ: Ոչ մի բան այնպես չի թունավորում ոճրագործների եւ զոհերի մթնոլորտը, որքան ուրացումը: Մինչ առաջինները ողբում են իրենց մեռյալների համար, պատասխանատուներն ասում են, թե դրանք չեն եղել»:

Սիլվեստր Գրոթը մարմնավորում է Մարտին Նիիպագենի՝ 1915-17-ին նա Հալեպում գերմանական դպրոցի ուսուցիչ է եղել: Ի թիվս այլ հաղորդագրությունների նա Բեռլինի Ռայխսթագի պատգամավորներին է ուղարկել ականատեսի իր վկայությունները: Սիլվեստր Գրոթը Գերմանիայում արժանացել է մի շարք մրցանակների, նա նաեւ թատրոնի շատ ճանաչված ռեժիսոր է: Դերասանը վերլուծելով հայտնի մյուս վավերագրությունները՝ նկատել է տալիս, որ դրանց մեջ առկա ֆիկտիվ խաղարկային տեսարաններում սովորաբար գոյություն ունի պատմական մի կերպար: Այստեղ մեկը չէ, շատ են:

Սանդրա Հյուլլերը կարդում է ամերիկացի միսիոներուհի 1902-1917-ին Խարբերդում բնակված Թեյսի Աթկինսոնի փաստագրությունը: Նրա օրագրային վկայությունները հետագայում հրատարակվել են «Խարբերդի օրագրեր. 1908-1917» վերնագրով: Սանդրա Հյուլլերը շատ փոքր բան է իմացել Հայոց ցեղասպանության մասին, եղածն էլ՝ իր հայ ընկերոջից, որը թեպետ անմիջական զոհ չլինելով, իր մեջ է կրել մեծ տառապանքը, նրան շատ է տանջել ցեղասպանության չճանաչված լինելու հանգամանքը: «Ինձ համար հայտնագործություն էր այդպիսի հերոսուժամանակ միշտ այդպես եմ վարվում: Ալմա Յոհաննսոնը ուժեղ անհատականություն է: Նա մանրամասնորեն նկարագրում է այն ամենը, ինչ տեսել է՝ առանց սեփական մեկնաբանությունների, բայց նրա գրածներում միայն այսբերգի գագաթն է երեւում: Նա խուսափում է գրել այն, ինչ պարզապես բառերով չես հանդերձավորի: Խոսել, պատմել էր պետք այնպես, կարծես քեզ հետ հարցազրույց են անում, պիտի գտնեի համապատասխան ձայնը, որ ականդիրներին խորհրդածելու առիթ կտար:

Հերմանն Բոյերը մարմնավորում է 1909-1917-ին գերմանական ռայխի կանցլեր Թեոբալդ ֆոն Բեթմանն-Հոլլվեգին: Նա մերժել է Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Գրաֆ Մեթթերնիխի՝ հայոց կոտորածները կանխելու առաջարկը: Նրա գլխավոր նպատակը Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիային դաշնակից ունենալն էր:

Սամուել Ֆինցին մարմնավորել է Յոհաննես Լեփսիուսին:

Թոմաս Հայնցեն հանդես է գալիս Օսկար Հայնցեի դերում: Վերջինս 1915-1917-ին Տարպիզոնում ԱՄՆ հյուպատոսն է եղել: Նա Կ.Պոլսում ԱՄՆ դեսպանություն բազմաթիվ գրություններ է ուղարկել հայերի տեղահանությունների վերաբերյալ:

Հաննա Հերցշրունգը մարմնավորում է 1900-ին Բիթլիսում ծնված Թագուհի Անտոնյանին: «Լավագույն երիտասարդ դերասանուհի» անվանակարգում արժանացել է Բավարական մրցանակի:

Էֆի Հոֆֆմանը հանդես է գալիս Էռնստ Քրիստոֆֆելի դերում: 1916-1919-ին Մալաթիայում եւ Սվազում հիմնադրել եւ ղեկավարել է կույր եւ հաշմանդամ հայ երեխաների որբանոց:

Բուրգհարդ Կլաուսները մարմնավորել է Յակոբ Քյունցլերին: 1915-17-ին շվեյցարացի Քյունցլերը Ուրֆայում բժշկի օգնական էր: 1921-ին Պոդստամում հրատարակված իր «Այրան եւ արցունքի երկրում» գրքում պատմում է ականատեսի վկայությունները: Կլաուսները արժանացել է միջազգային մրցանակների, 2005-ին՝ Գերմանական կինոյի մրցանակին: Քյունցլերի դերակատար Բուրգհարդ Կլաուսները ինտերնետի միջոցով է ճանաչել իր մարմնավորած կերպարը եւ հիացել նրանով: Հայկական հարցի մասին էլ իմացել է, բայց ոչ այսքան մանրամասն: Ինձ համար հետաքրքրական էր նաեւ տեղեկանալ, թե գերմանական ռայխը որքան իրազեկ է եղել իր դաշնակցի գործողություններին եւ ոչինչ չի ձեռնարկել: Նրա գնահատմամբ, «Աղեն»-ի նման ուրիշ նախագծեր էլ կան, բայց մինիմալիստական բեմադրությունը, որտեղ պատմությունը վերակենդանացնող բառերը, ուղղակի՝ առանց հագուստի ու ռեկվիզիտի օժանդակության, ականդիրների հետ են խոսում, ուրիշ որակ է ձեռք բերում:

Յոախիմ Կրոլը հանդես է գալիս Վոլֆֆ Մեթթերնիխ ցուր Գրախտի դերում: 1915-16-ին եղել է Կ.Պոլսում կայզերական Գերմանիայի դեսպանը: Նա ճշգրիտ մանրամասնություններով գրառումներ է ուղարկել ռայխի կանցլերին եւ արտգործնախարարությանը: Խնդրել է կանցլերին գործածել Գերմանիայի ազդեցությունը՝ թուրքերին ճնշելու եւ կոտորածը կանգնեցնելու հարցում: 10 ամիս պաշտոնավարումից հետո նա թուրք գործընկերների ճնշումների պատճառով Բեռլին է կանչվել: Որպես լավագույն դերակատար Կրոլն արժանացել է Գերմանական կինոյի մրցանակին: «Աննա Ֆրանկ-իրական պատմություն» ֆիլմում գլխավոր դերակատարման համար 2001-ին ստացել է Emmy:

Տես՝ էջ 6

AZG NEW PDF.qxd 23/04/2010 22:21 Page 1

Փրկված մասունքներ

1915 թվականին տեղի ունեցած XX-րդ դարի առաջին ցեղասպանությունը 1,5 միլիոն հայերի կյանք խլեց ու դրա տասնապատիկին տնավեր բեց իր հայրենիքից: Մինչեւ 1914 թ. Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրությունում գտնված էին 2549 հայկական եկեղեցական հաստատություններ: Սակայն դրանց մեծ մասը թալանվեց, այրվեց կամ ավերվեց հիմնահատակ Հայոց Մեծ եղեռնի ժամանակ ու նաեւ հետո, անգամ մինչեւ մեր օրերը: Ոչնչացվեցին հազարավոր ձեռագրեր, մշակութային բազմաթիվ արժեքներ՝ հայկական մանրանկարչության գլուխգործոցներ:

Հայաստանի պատմության թանգարանում այսօր պահպանվում են հայ ժողովրդի անմահ գանձերից մոտ կես միլիոն ցուցանմուշ: Երեկ՝ Հայոց Մեծ եղեռնի 95-րդ տարելիցի նախօրեին բացվեց ցուցահանդես, որը նվիրված էր հայի մշտանորոգ ոգուն: Ցուցանմուշները ներկայացնում էին Արեւմտյան Հայաստանի բոլոր վիլայեթներից, գավառներից փրկված մասունքներ: Թանգարանի տնօրեն **Անելկա Գրիգորյանը** տեղեկացրեց, որ ներկայացված նմուշները 80-90 տարի առաջ են ձեռք բերվել: Դրանց թվում են եկեղեցական ծիսական պարագաներ, հագուստներ, Վան-Վասպուրականի ասեղնագործության, արծաթագործության, ժանյակագործության նմուշներ: Ուշագրավ էր, որ պահպանվել է Արշիլ Գորկու հայտնի կտավի պատմությունը, մոր զգեստը, գոգնոցը, որոնք ամբողջացնում են այդ տարածաշրջանի ժամանակաշրջանը ու հիշեցնում հայ կնոջ գոգնոցի սիմվոլը: Ցուցանմուշներում նկատվում են Վանի XVIII-XIX դարերի կանացի արդուզարդի, արծաթագործության անկրկնելի նմուշներ, ոսկյա, մետաղյա ու բրդյա թելերով հյուսված գոգնոցներ, գլխաշորեր, ճարմանդներ, գորգեր: Ներկայացված են նաեւ Արեւմտյան Հայաստանում եղած եկեղեցիների հազվագյուտ լուսանկարներ ու նաեւ Սբ. Կարապետ եկեղեցու փայտյա դուռը: Ցուցահանդեսը կգործի մեկ ամիս:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Վերջակետվող Եղեռն

Այսօր էլ հիշողությանս մեջ դեռ արցունքի նման թաց տասիս աչքերն են մնացել, նրա խորտոված ձեռքերը, անչափ մաշված մասի արծաթյա մատանին, որի հետ հաճախ էի խաղում, բայց երբ փորձում էի մատից հանել, արգելում էր. «Մտո նշանիս մատնին է, լաո՛, ձեռք մի տուր»: Եվ մեկ էլ ամենօրյա երգը, որ մենք էլ էինք անգիր արել. «Թաու դարդեր, թաու դարդեր...»: Տատս Մուշից էր փախել իր ընտանիքի հետ ու ճանապարհին ոչից հետ մնալով՝ կորցրել էր հղի քրոջը, որ ծանրացած լինելով՝ չէր կարողացել փախչել: Տատս խնդրել է, որ միանա իրենց, որ մի հասնեն ոչից, բայց քույրն անկարող լինելով՝ համոզել է տատիս, որ թողնի իրեն ու հասնի երեխաներին ու ամուսնուն, իսկ ինքը ոսկյա գոտի ունի, կտա ռուս զինվորներից մեկին եւ կխնդրի իրեն սայլով տեղափոխել: Տատս այդպես էլ չգտավ քրոջը: Հիմա եմ հասկանում տատիս ցավը, երբ ձեռքիցս բռնած գնում էինք շուկա եւ ամեն մի գնում կատարելիս հետաքրքրվում, թե որտեղից է, իսկ եթե մտեցի էին լինում, հարցափորձ էր անում իր քրոջից: Եվ ամեն անգամ շուկայից վերադառնալիս անուշաբույր մրգերի ու թարմ կանաչու հոտը ծանրացած էր լինում տատիս հեռավոր թախիծով ու մոխրացած կարոտով: Հիմա եմ հասկանում, թե ինչու էր տատս մեզ ամեն օր պատմում իր տեսած գաղթի մասին ու թաքուն արտասվում: Մենք մի մաքուր էջ էինք իր համար, որի վրա նա ամեն օր իր վիշտն էր գրում՝ վերջակետ դնելով անցյալին, բայց մի՞թե Եղեռնը ենթարկվում է վերջակետերին: Շատ կուզենայի վերջակետել տատիս թախիծը, բայց այսօր էլ ստորակետել եմ եւ կանգնել: Ո՞ւր է այդ վերջակետը, այնպես եմ ուզում այն ավարտել «Սեր եւ խաղաղություն» բառերով, որ տատիս անհուն վիշտը չմնա որպես եղեռնի հուշակոթող: Փոքր էի եւ չէի հասկանում այդ վշտի մեծությունը, բայց ինձ էլ էր համակում նրա թախիծը, որը փարատելու համար գլուխս դնում էի տատիս գաղթական գոգնոցին եւ գրկում նրա վշտի մի մասը: Ժպտում էր տատս՝ փարատելով իր ծերացած թախիծը իմ պատանեկության մեջ, եւ տատս ու թոռ իրար գրկած՝ երգում էինք հեռու Մուշից բերած իր «Թաու դարդեր, թաու դարդեր» մաիվան մեղեդին, որ տարիներ հետո, ամեն ապրիլի 24-ին ես կախում էի Ծիծեռնակաբերդի խոնարհված կամարներից եւ հավատում, որ մի օր կվերջակետվի տատիս հայկական թախիծը աբխարհի մարդկանց ձեռքով, այն մարդկանց, որոնց շուրթերից մեղրի նման կկաթի «Հայր մերը»:

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ

Ազգային գրադարան, մատենագետ

«Ծիրանի ծառ» Հայաստան եւ արդարություն պահանջող հայ

Այսպիսին է Հայաստանը «հավերժական երգերում»

Ի՞նչ էր անում հայ երիտասարդը, մարդը, իր հայրենիք Արեւմտյան Հայաստանում, նախքան Ցեղասպանությունը. նա մշակում էր իր հողը՝ իր երգը շուրթերին, նա սիրում էր իր երկիրը, իր սիրած աղջկան՝ իր երգը շուրթերին, նա ապրում էր, նա ստեղծում ու երջանիկ էր: Առհասարակ որքա՞ն քիչ բան է անհրաժեշտ հային՝ երջանիկ լինելու համար, սակայն, որքա՞ն դժվարություններ, տառապանքներ է տեսել հայը՝ երջանկություն վաստակելու համար:

Հայ ժողովրդի ամփոփ պատմությունը, հայ մարդու նկարագիրը ապրիլի 22-ին ներկայացվեց Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում:

Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան՝ Ցեղասպանության 95-րդ տարելիցի կապակցությամբ, ներկայացրեց Մարգարիտա Մնացականյանի սցենարով ու բեմադրությամբ՝ «Ծիրանի ծառ» ներկայացումը, որը կատարեց ասոցիացիայի թատերախումբը:

Հայաստանը խորհրդանշող ծիրանի ծառի շուրջ բոլորը հավաքված երիտասարդները միմյանց սեր էին խոստովանում, աշխատում էին միմյանց հետ, ապրում էին միասին, սակայն... Ցեղասպանություն, գաղթ, հայրենազրկում: Հայն ու Հայաստանը, սակայն, ամենեւին էլ պատահականորեն չեն առաջինն ընդունել քրիստոնեությունը. մենք հարություն առնելու հաստկություն ունենք. «Ծիրանի ծառը» նոր կյանք ստացավ՝ նոր, ու էլի մեր հողերում, հայը՝ աղոթքով, տառապանքով, հյուծված, բայց էլի իր երգը շուրթերին նոր կյանք սկսեց ու շարունակեց կառուցման, մշակման իր գործը՝ արդեն միայն Արեւելյան Հայաստանում:

Որոշ ժամանակ անց հայ մարդու հայրենիքը դարձավ սովետական երկիրը, սկսվեց յուրաքանչյուր մարդու համար սպառնալիք՝ արյունահեղ համաշխարհային պատերազմը, ու հայը, գանգատվելով անարդարությունից՝ «էլի՞ պատերազմ», լքելով տուն, ընտանիք՝ մեկնեց ռազմաճակատ, մեկնեց ու նոպաստեց հաղթանակին, ու վերադարձավ:

Սովետների երկիրն էլ երկար կյանք չունեցավ. «Ծիրանի ծառը» սկսեց ծաղկել՝ Հայաստանը անկախ դարձավ: Դարասկզբի հյուծված հայը, դարավերջին անկախ Հայաստան ստեղծեց, ու այսուհետեւ պիտի միասնաբար, հանդուրժողաբար, սիրով շենացնի այն, պիտի անի դա իր երգը շուրթերին, պիտի կանգուն մնա հավերժական «Ծիրանի ծառը»:

«Արդարություն», այս բառով ավարտվեց ներկայացումը՝ Պարոնյանում: «Այսպիսին է Հայաստանը հավերժական երգերում», ծաղկած ու արդեն նաեւ պտուղներով լի ծիրանենի կիհիեցնի «ապագայի երգերում», վստահ ենք:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

«Աղեն». Անցյալի վավերագրություն՝ ներկայի ձայնով

5-րդ էջից

Շվեյցարացի դերասան, Ադոլֆ Գրիմմե մրցանակի արժանացած Շտեֆան Կուրսը մարմնավորել է ցեղասպանագետ Ռաֆայել Լեմկինին:

Պետեր Լոհմայերը Վիլհելմ Լիթթենի դերակատարն է: 1914-15-ին նա Թավրիզում կայզերական Գերմանիայի հյուպատոսության աշխատակից է եղել: Բաղդադից Հալեպ ուղեւորվելիս ականատես է եղել ցեղասպանությանը, գրառումներ է արել օրագրերում: Դերասան Լոհմայերը 1998-ին արժանացել է Գերմանական կինոմրցանակին, 2000-ին՝ Բավարական հեռուստատեսության, իսկ 2004-ին՝ Հանդիսատեսի մրցանակին է արժանացել: Կինոյի եւ հեռուստատեսության հանրածանոթ դերասան Ամսել Միլբերգը Հարրի Շթումերի դերում է հանդես գալիս: Շթումերը «Քյոլնիշե ցայթունգ»-ի թղթակիցն է եղել Թուրքիայում 1915-1917-ին: Իր թղթակցությունները, ինչպես նաեւ գերմանական կառավարությանը հասցեագրած հաղորդագրությունները հրատարակել է իբրեւ ականատեսի գիրք՝ «Պատերազմական երկու տարի Կ.Պոլսում»: Գերմանա-երիտթուրքական բարոյականություն եւ խաղաղություն» վերնագրով:

Ռալֆ Միսսեն հանդես է գալիս Յոհան Մորդթմանի դերում: 3. Մ. 1915-18-ին կայզերական Գերմանիայի գլխավոր հյուպատոսն էր Կ. Պոլսում: Նրա նշումներն ու հաղորդագրությունները պատմում են ցեղասպանության ընթացքի մասին: Միսսեն խաղացել է ավելի քան 50 ֆիլմում, նաեւ ռեժիսոր է եւ հեղինակ:

2006-ին որպես լավագույն դերասան «Գոլդենը կամերայի» արժանացած Ուլրիխ Նոեթենը մարմնավորել է Արմին Թ. Վեգներին: Գրող, 1915-16-ին սպայական կոչումով սանիտար Վեգների հեղինակած լուսանկարները ցեղասպանության կարեւորագույն փոնիկոնն են ամբողջացնում:

90-ից ավելի կինո եւ հեռուստատեսային ֆիլմերում խաղացած, բազմաթիվ մրցանակներ, դրանց թվում նաեւ՝ 2009-ին Գերմանական կինոմրցանակը ստացած Անդրեաս Շմիդտը մարմնավորել է ամերիկացի հրատարակիչ եւ թղթակից Սամուել Ս. Մըֆլուրեին:

Կատարինա Շյուբլերը հանդես է գալիս Շվեյցարացի բուժքույր, 1915-1917-ին Հալեպում փախստականների հարցերով օգնական Բեաթրիս Ռոհների դերում: Բուժքույրը այնտեղ ղեկավարել է մի որբանոց եւ ականատեսների վկայություններ է գրել իր նամակներում եւ հաղորդագրություններում: Դերասանուհի Շյուբլերը թատրոնի եւ կինոյի մի շարք մրցանակների դափնեկիր է, 2006-ին արժանացել է «Տարվա դերասանուհի» մրցանակի:

Շառլոտտե Շվաբը մարմնավորել է փախստականների հարցերով օգնական, 1903-1935-ին Ուրֆայում եւ Հալեպում դանիացի ուսուցչուհի Կարեն Եփփեի դերը: Դերասանուհին հարցազրույցներից մեկում պատմում է, որ ֆիլմի ամենադժվար մարտահրավերը աթոռի վրա նստած, Կարեն Եփփեին՝ Հայերի մայրիկին, ինչպես անվանում էին նրան, մարմնավորելն է եղել՝ ոչ խաղալ էր պետք, ոչ էլ սոսկ ընթերցանություն: «Մի սեւ սենյակ, մի սեւ աթոռ եւ ուրիշ ոչինչ: Դեմ հանդիման, մութի մեջ միայն Էրիկ Ֆրիդլերն է նստած ու հարցեր է տալիս: Իսկ տեսքի հիշողություններն այնքան պատկերավոր են: Դժվարն այն էր, որ արտաքուստ ձեւականորեն խիստ էր, բայց բովանդակային տեսակետից՝ անհավասալի զգացմունքային: Ես պիտի անէանայի Կարեն Եփփեի թիկունքում եւ չնայած դրան՝ նրա ձայնը պիտի լինեի», «Աղեն» ֆիլմի ստեղծագործական առանձնահատկությունների մասին է կարծիք հայտնում դերասանուհին Շվաբը:

Թոմաս Թիիմեն Վալտեր Ռյոսլերի դերում է հանդես գալիս: Ռյոսլերը 1914-1923-ին եղել է կայզերական Գերմանիայի հյուպատոսը Հալեպում: Բարձրաստիճան դիվանագետն իրազեկ էր ճշգրիտ տեղեկատվության: Նա գրել է բազմաթիվ հաղորդագրություններ, որոնք հաստատում են, թե հայերի սիստեմատիկ ոչնչացումը թուրք պաշտոնյաների ձեռամբ է եղել: Թոմաս Թիիմեն 2000-ին «Տարվա դերասան» մրցանակին է արժանացել: Խաղացել է հանրահայտ շատ ֆիլմերում, ինչպես օրինակ՝ «Ուրիշների կյանքը», «Անկում»:

Հեռուստատեսային լեգենդար դեմքերից մեկը, հանդիսատեսին սիրելի Ֆրիդրիխ ֆոն Թիունը մարմնավորում է 1913-16-ին Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին: Նա վկան է եղել Հայոց ցեղասպանության եւ 1918-ին հեղինակել է «Դեսպան Մորգենթաուի պատմությունը» աշխատությունը: Մորգենթաուին մարմնավորած Ֆրիդրիխ ֆոն Թիունը ֆիլմի առթիվ կայացած հարցազրույցում պատմում է, թե ինքը Հայոց ցեղասպանության նյութին առնչվել է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» կարդալով: Հիացած եմ, ասում է դերասանը: Խոսելով «Աղեսի» մասին՝ նա նշում է այն, ինչ առանձնահատուկ է այս ֆիլմում՝ պատմական տեսքը հարցազրույցի միջոցով արդիական իրադրություն է դառնում: «Սա արվում էր այսօրվա ակնդիրներին պատմական իրադարձությունը հնարավորինս մերձեցնելու գիտակցությամբ: Ինձ համար սա արտակարգ հետաքրքրական փորձառություն էր»:

Հայ հանրությանը հայտնի Վիմ Վենդերսի, Ժան-Լյուկ Գոդարի ֆիլմերում խաղացած Հանց Ցիշլերը Լեսլի Ա. Դեվիսի դերակատարն է: Դեվիսը 1914-17-ին եղել է Խարբերդում ԱՄՆ հյուպատոսը: Հայոց ցեղասպանության մասին հաղորդագրությունները նա ընդգրկել է նաեւ իր«The Slaughterhouse Province.An American Diplomat's Report on the Armenian Genocide 1915 -17» գրքում: Ցիշլերը նաեւ կինոքննադատ է, գրական էսսեների հեղինակ: 2006-ին հիմնել է Alpheus հրատարակչատունը: 2009-ին արժանացել է Հայնրիխ Մանն մրցանակին:

Մամուլի գնահատականը, կարծիքներ

Ֆիլմի հեռարձակումից հետո գերմանական մամուլը դրական գնահատականներ հրապարակեց՝ «դիտարժան ֆիլմ է» («Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգ»), «արտասովոր հեռուստավավերագրություն» («Շպիգել»), «Ֆիլմն ինձ անհուն գիշեր է պարգեւել», հայտնել է «Շպիգելի» նախկին խմբագիրներից Շտեֆան Աուստը: «Ֆիլմերը քաղաքականություն են ստեղծում: Քաղաքական պայթուցիկ կա հայերի հանդեպ՝ թուրքերի կատարած ցեղասպանության՝ գերմանական վավերագրության մեջ» («Դի ցայթ»): «Աղեսը» տպավորում է նաեւ նրանով, որ վերջում Թուրքիայի հնարավոր ԵՄ անդամակցության հարցը պայմանավորում է Հայոց ցեղասպանության ճանաչումով» («Դոյչլանդ կուլտուր»):

Գյունտեր Գրասն էլ է դիտել ֆիլմը: Թուրքիայում՝ մասնավորապես Ստամբուլում նա հայտարարել է՝ «Ամենալավն այն կլիներ, որ ֆիլմը ցույց տային թուրքական հեռուստատեսությամբ»:

Ֆիլմից հետո մեզ իրենց տպավորությունները փոխանցած մեր բոլոր զրուցակիցները նույն բանն էին ասում՝ հրաշալի ֆիլմ է: Համառոտ ներկայացնենք մասնագիտական երկու կարծիք: Բոխումի Սփյուռք եւ ցեղասպանություն ինստիտուտի հիմնադիր տնօրեն Միհրան Դաբաղի ասելով. «Ֆիլմը Գերմանիայի հասարակության վրա մեծ տպավորություն կթողնի: Կատարվածը կարեւոր աշխատություն մըն է: Ռալֆ Ջորդանոյի՝ 1986-ին նկարահանած «Հայկական հարց այլեւս գոյություն չունի» ֆիլմից հետո վերահիշեցում մըն է: Երիտթուրքական գաղափարախոսությունն ալ ընդգրկող պատմական վերլուծական մոտեցումը հավանաբար ավելի լավ պիտի բացատրեր կատարվածը: Բայց դժվար է կարճ ժամանակի մեջ ամբողջը տեղավորել: Կուզեի ճշտել՝ այստեղ հայերը Օսմանյան կայսրության մեջ փոքրամասնություն նկատելը պերսոնալիզմի սխալ ընկալման պատճառ կդառնա: Կփափագեի, որ հուզումներեն անդին, Հայոց ցեղասպանությունը, ժողովուրդի մը պատմությունը ավելի վերլուծական, ինչպես Հոլոքոսթի պարագային կկատարվի, գիտական եւ մտավորական վերահիմնատավորման աղբյուր դարձնենք»:

«Հայ-գերմանական նամակնի» գերմանալեզու ամսագրի խմբագիր Ռաֆֆի Քանդյանն էլ «Աղեսը» Ջորդանոյի ֆիլմի հետ է համեմատում: «Ֆիլմի կառուցվածքը շատ հաջող գտա, ասում է մեր զրուցակիցը: Առօրյայով սկսավ ու պատմությանն անցավ՝ հեռուստադիտողի ուշադրությունը անոր վրա սեւեռելով»: Քանդյանը կարեւոր ձեռքբերում է համարում ֆիլմում 20-ից ավելի լավագույն դերասանների՝ «ամեն օր տեսած դեմքերի» ընդգրկումը: Խմբագիրը նկատել է տալիս, որ ֆիլմում կային նաեւ պատմական դրվագներ, որ առաջին անգամ էին ցուցադրվում, օրինակ՝ «Թալեաթի թաղումը ոչ մի տեղ ցույց չէին տվել: Կուզի պիտի ունենա այս ֆիլմը, այն շահեկան ներդրում է»: Մեր այն դիտարկմանը, թե ֆիլմում բացակայում է մի հիմնական՝ հայրենազրկման փաստը, միգուցե նաեւ այն պատճառով, որ Հայաստանը բավականաչափ երկար ժամանակ այն չի շոշափել, պարոն Քանդյանը հարցրեց՝ մի ֆիլմից 10 բան սպասելը որքա՞ն իրատես է:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

AZG NEW PDF.qxd 23/04/2010 22:53 Page 1

ԱԶԳ **Մարզական**

Փաշիկ Ալավերդյան. «Հայ ծանրոցները գերազանց սկսեցին մրցաշրջանը»

Վերջերս Մինսկում ավարտված ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում գերազանց ելույթներ ունեցան հայ ծանրոցները՝ նվաճելով 7 ոսկե, 8 արծաթե, 4 բրոնզե մեդալ: Մեր ծանրոցների ելույթները խնդրեցին գնահատել ծանրամարտի Հայաստանի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար, միջազգային կարգի մրցավար Փաշիկ Ալավերդյանին:

- Մեր որոշ ծանրոցներ քաջային նոր կարգերում հանդես եկան: Ինչպե՞ս եք գնահատում նրանց ելույթները, նրանք իրենց լիովին դրսևորեցի՞ն:

- Ընդհանուր առմամբ Հայաստանի հավաքականը գերազանց հանդես եկավ: Մեդալների նման առատությամբ աչքի էր ընկել 2006-ին Ստրասբուրգում կայացած Եվրոպայի առաջնությունը, որում հայ ծանրոցները 18 մեդալ էին նվաճել: Քաջային նոր կարգում՝ մինչև 69 կգ ծանրոցուհիների մրցավեճին մասնակցած Մելինե Դալուզյանը վերջապես լրիվ ապաքինվել է հիվանդությունից եւ բավական հաջող ելույթ ունեցավ: Տիգրան Մարտիրոսյանը դեռեւս անցյալ տարի էր տեղափոխվել մինչեւ 77 կգ քաջային կարգ եւ Մինսկում նա կրկին դրսեւորեց իր վարպետությունը՝ հռչակվելով Եվրոպայի չեմպիոն: Զգալի առաջընթաց է ապրել Գեւորգ Պողոսյանը, որը 85 կգ քաջային կարգում չեմպիոն հռչակվեց՝ բարելավելով նախորդ տարվա ցուցանիշը: Արա Խաչատրյանն էլ երկարատեւ ընդմիջումից հետո վերադառնալով մրցահարթակ, ուրախացրեց իր վստահ ելույթով: Հռիփսիմե Խուրշուդյանը չցանկացավ տեղափոխվել ավելի բարձր քաջային կարգ: Արդեն 4 տարուց ավելի է, նա նույն քաջային կարգում է հանդես գալիս եւ մենք զգում ենք, որ ստիպճանաբար նա կարծես զիջում է իր դիրքերը: Հավանաբար աբխարհի առաջնությունում նա քաջային կարգը կփոխի: Թեեւ Արքուր Բաբայանը մեդալ չնվաճեց, սակայն նա էլ զգալիորեն բարելավեց ցուցանիշները:

- Մեզ բոլորիս ուրախացրեց հատկապես պատանի Սմբատ Մարգարյանի ելույթը: Մի պահ թվաց, թե Եվրոպայի չեմպիոն հռչակված բելառուսցի ծանրոցը չֆիքսեց քաբը ու Սմբատից կարծես թե «գողացան» ոսկե մեդալը: Դուք առաջնությունը սպասարկող մրցավարական կազմի մեջ էիք: Ի՞նչ կասեք այդ առնչությամբ:

- Սմբատն իրոք շատ տաղանդավոր ծանրոց է, 17-ամյա հրաշամանուկ: Անցյալ տարի նա չորս անգամ մեկնարկի էր դուրս եկել եւ երեքում հաղթող էր ճանաչվել, իսկ աբխարհի պատանեկան առաջնությունում 2-րդ տեղն էր գրավել: Նա մշտապես առաջադիմում է, քրտնաջան աբխատում է եւ արդյունքն իրեն սպասեցնել չի տալիս: Որպես մրցավար կարող եմ ասել, որ բելառուսցի ծանրոցի ելույթի ժամանակ սխալ կար, ուստի կարելի էր մոտեցումը չհաշվել: Առաջին պահին ֆիքսագիա կար, հետո սկսեց քայլել: Հենց դա ոմանց մոտ տարաձայնության տեղիք տվեց: Նախկինում անհրաժեշտ էր ծանրաձողը գլխավերեւում անշարժ պահել նվազագույնը 3 վրկ, հիմա դա չի գործում, բավական է մեկ ակնթարթը, որպեսզի քաբը ֆիքսվի: Դրա համար մրցավարները պետք է արագ արձագանքեն: Ամեն դեպքում տան պատերն օգնեցին բելառուսցի ծանրոցին:

- Մեր մյուս երիտասարդ ծանրոց Ռուբեն Ալեքսանյանն էլ ուրախացրեց:

- Ռուբենը 2-րդ անգամ էր մասնակցում մեծահասակների Եվրոպայի առաջնությանը: Անցյալ տարի Բուխարեստում նա պոկում վարժությունում 192 կգ-ը բարձրացնելիս վնասել էր ուսը, իսկ Մինսկում 195 կգ-անոց ծանրաձողը գլխավերեւում պահեց: Հրում վարժությունում էլ նա գերազանցեց իր ցուցանիշը եւ մինչեւ վերջ պայքարեց ռուսաստանցի Չիգիշեւին շրջանցելու համար: Սակայն այս անգամ դա նրան չհաջողվեց: Սակայն Ռուբենը դեռեւս երիտասարդ է ու ամեն ինչ առջեւում է: Սովորաբար գերծանր քաջային ծանրոցները 24-25 տարեկանից հետո են բարձր արդյունքներ ցույց տալիս:

- Նախնական տվյալներով Առաքել Միրզոյանն էլ պետք է մասնակցեր առաջնությանը:

- Նա մասնակցել էր հավաքականի առաջին հավաքին, հետո պատրաստվում էր անհատական ծրագրով: Սակայն վերջին պահին որոշեց չմասնակցել առաջնությանը: Պատճառն ինքն ու իր մարզիչը ստույգ կասեն:

- Նազիկ Ավդալյանի վիճակն ինչպիսի՞ն է:

- Նա ցավեցրել էր ձեռքը, ուստի նպատակահարմար գտան, որ բաց թողնի Եվրոպայի առաջնությունն՝ աբխարհի առաջնությանն ավելի լավ նախապատրաստվելու նպատակով:

- Մրցումների մասնակցությունը շա՞տ է ծանրաբեռնում ծանրոցներին:

- Իհարկե, ծանրաբեռնվածությունը շատ մեծ է: Այդ պատճառով սովորաբար ծանրոցները տարեկան 2 մրցումից ավելի չեն մասնակցում: Օրինակ, Տիգրան Վարդանի Մարտիրոսյանը, Գեւորգ Դավթյանը բաց թողեցին Եվրոպայի առաջնությունը եւ պատրաստվում են աբխարհի առաջնությանը:

- Մինսկում Հայաստանի հավաքականը թերի կազմով հանդես եկավ: Աբխարհի առաջնությունում ինչպիսի՞ն կլինի մեր թիմի կազմը:

- Նախ ասեմ, որ սեպտեմբերին Անթալիայում կայանալիք աբխարհի առաջնությունը վարկանիշային է քաջային կարգում չեմպիոն հռչակվեց՝ բարելավելով նախորդ տարվա ցուցանիշը: Արա Խաչատրյանն էլ երկարատեւ ընդմիջումից հետո վերադառնալով մրցահարթակ, ուրախացրեց իր վստահ ելույթով: Հռիփսիմե Խուրշուդյանը չցանկացավ տեղափոխվել ավելի բարձր քաջային կարգ: Արդեն 4 տարուց ավելի է, նա նույն քաջային կարգում է հանդես գալիս եւ մենք զգում ենք, որ ստիպճանաբար նա կարծես զիջում է իր դիրքերը: Հավանաբար աբխարհի առաջնությունում նա քաջային կարգը կփոխի: Թեեւ Արքուր Բաբայանը մեդալ չնվաճեց, սակայն նա էլ զգալիորեն բարելավեց ցուցանիշները:

2012-ի Լոնդոնի օլիմպիադայի ուղեգրերի համար, ուստի Թուրքիայում մասնակցելու ենք լրիվ կազմով՝ 8 ծանրոց, 7 մարզուհի: Եթե հաջողվի այս եւ մյուս տարվա աբխարհի առաջնությունների ընդհանուր արդյունքով թիմային հաշվարկում տեղ զբաղեցնելու լավագույն վեցնյակում, ապա Լոնդոնում իրավունք կունենանք ներկայանալ առավելագույն քանակի ծանրոցներով՝ 6 տղա, 4 աղջիկ: Իհարկե, մենք քաջային բոլոր կարգերում չունենք մեդալի հավակնորդներ: Փոխարենը սուր մրցակցություն է ծավալվել մինչեւ 77 եւ 85 կգ քաջային ծանրոցների միջեւ: Ուստի քաջային այդ կարգերում երեւի 2-ական ծանրոց հանդես գա: Գեւորգ Պողոսյանն էլ կտեղափոխվի մինչեւ 94 կգ քաջային կարգ: Ամեն դեպքում Եվրոպայի առաջնությունում գերազանց ելույթները հույս են ներշնչում, որ Անթալիայում էլ հայ ծանրոցներն իրենց երկրպագուներին ուրախանալու շատ առիթներ կտան:

- Մինչեւ աբխարհի առաջնության մեկնարկը մեր ծանրոցներին ի՞նչ նոր փորձություններ են սպասում:

- Մայիսի 16-23-ը Իսպանիայի Վալենսիա քաղաքում կկայանա Եվրոպայի պատանեկան առաջնությունը: Հաջորդ ամիս Սոֆիայում տեղի կունենա աբխարհի երիտասարդական առաջնությունը: Իսկ օգոստոսի 14-26-ը մեր երկու լավագույն պատանի ծանրոցները կմասնակցեն Սինգապուրում կայանալիք պատանեկան օլիմպիական խաղերին: Այնպես որ այս մրցաշրջանն էլ մեր ծանրոցների համար բավական հագեցած է: Առաջին լուրջ մրցումը Հայաստանի պատվիրակների համար շատ հաջող էր: Հուսանք, որ առաջիկա մրցումներից էլ մեր ծանրոցները մեդալների հարուստ ավարով տուն կվերադառնան:

Մոզլի-Մեյվեզեր զույգի հաղթողին կհանձնվի ադամանդե գոտին

Բոնցֆամարտի համաբխարհային խորհրդի (WBC) նախագահ Խոսե Սուլեյմանը տեղեկանալով, որ Ֆլոյդ Մեյվեզեր-Շեյն Մոզլի մենամարտի հաղթողը WBA-ի վարկածով չեմպիոնական տիտղոսի չի արժանանալու, մտադիր է նրան հանձնել իր կազմակերպության ադամանդե գոտին:

«Այդ մենամարտը չի կարող հասարակ մրցամարտ լինել, որում բոնցֆամարտիկները ռինգ են դուրս գալու գումար վաստակելու եւ հաղթողին որոշելու համար: Դա երկու էլիտար բոնցֆամարտիկների մրցամարտ է, որոնք արդեն մտել են պատմության մեջ: Ուստի այն չի կարող չարժանանալ բոնցֆամարտի որեւէ կազմակերպության ուշադրությանը: Կարծում եմ, որ WBC-ի ադամանդե գոտին արժանի պարգեւ կլինի հաղթողի համար», նշել է Սուլեյմանը:

Սուլեյմանը նաեւ հայտնել է, որ եթե իրեն չքույլատրեն գոտին հաղթողին հանձնել ռինգում, ապա դա կանի մենամարտից հետո, հանդերձարանում: Հիշեցնենք, որ սկզբնապես ադամանդե գոտին սահմանվել էր հանրահայտ բոնցֆամարտիկների մենամարտերի հաղթողների համար: Այդ տիտղոսի առաջին դափնեկիրը Մենի Պակյաոն է, որն անցյալ տարի հաղթել էր Միգել Կոտոյին:

ՇԱԽՄԱՏ

Հաղթական տուր

Ֆրանսիայում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրը հաջող էր հայ շախմատիստների համար: Միայն Ռուդոլֆ Գրիգորյանը պարտվեց, մյուս 5 շախմատիստները հաղթեցին:

Հերթական հաղթանակները տոնեցին Գրիգոր-Սեւակ Մխիթարյանն ու Վալենտին Փամբուկչյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Ալաին Ֆայարդին եւ Քրիստոֆ Բուտոնին: Մեր շախմատիստները վաստակեցին 5 միավոր: Վարդան Չմշկյանը հաղթելով Բրունո Ֆրերեին, վաստակեց 4 միավոր: 3,5 միավոր ունի Կլոդ Ադամյանը, որը հաղթեց Մանուել դա Կոստային: Ալբերտ Լիսայանն էլ վաստակեց 3 միավոր՝ պարտության մատնելով Կիրիլ Լիվենին:

Մրցաշարի ավարտից 2 տուր առաջ միանձնյա առաջատար դարձավ Նամիգ Դուլիեւը, որը վաստակել է 6 միավոր: 5,5-ական միավորով նրան հետապնդում են Ալբերտո Դավիդը, Մաթեյ Կոռնետը, Անդրե Դիամանտը, Վլադիմիր Մալանյուկը, Ֆաբիեն Գուլեուփը եւ Արգյադիպ Դասը:

Մեդալ նվաճել չհաջողվեց

Վիեննայում ընթացող ձյուդոյի Եվրոպայի առաջնությունը մեր ձյուդոյիստների համար ավարտվեց: Մրցաշարին մասնակցած հայ երեք ձյուդոյիստներից ոչ մեկին չհաջողվեց մրցանակակիր դառնալ:

Առավել հաջող հանդես եկավ Եվրոպայի առաջնությունների բազմակի մրցանակակիր Հովհաննես Դավթյանը, որը գրավեց 5-րդ տեղը: Մեկնարկում տարած երկու հաղթանակներից հետո Հովհաննեսը պարտվեց ռուսաստանցի Բեսլան Մուդրանովին ու ստիպված էր պայքար մղել բրոնզե մեդալին տիրելու համար: Սակայն այստեղ էլ նա անհաջողության մատնվեց: Առաջին գոտեմարտում հաղթելով չեխ Պավել Պետրիկովին, Դավթյանը պարտվեց իտալացի Էլիո Վերդեին ու զրկվեց մեդալի համար պայքարելու հնարավորությունից:

Արմեն Նազարյանն էլ մինչեւ 66 կգ քաջային կարգում 2 անընդմեջ հաղթանակներից հետո պարտվեց իսպանացի Սուգոյ Ուրիարտեին, որն ի վերջո նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Իսկ սփոփիչ մրցաշարում Նազարյանը զիջեց ֆրանսիացի Լուիս Կոռվալին եւ գրավեց 7-րդ տեղը:

Ավելի անհաջող էր Արտյոմ Բաղդասարյանի (73 կգ) ելույթը, որն առաջին գոտեմարտում զիջելով լեհ Կրիշտոֆ Վիլկոմիրսկուն, դուրս մնաց հետագա պայքարից:

Դանիելյանն ու Մկրտչյանը կմասնակցեն Նալչիկի մրցաշարին

Ապրիլի 26-ին Նալչիկում իրենց մրցավեճը կսկսեն շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության 3-րդ փուլի մասնակիցները: Նրանց թվում են Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը, որոնց հարկ կլինի մրցել Համփի Կոներուի, Հու Յիֆանի, Ժաո Քյոլի, Տատյանա Կոսինցեւայի, Պիա Կրամլինգի, Նանա Ձագնիձեի, Ժու Չենի, Բաթհույագ Մոնգոնտուլի, Բաիրա Կովանովայի եւ Բեթյուլ Յիլդիզի հետ:

Մրցաշարի ընդհանուր մրցանակային հիմնադրամը 40 հազար եվրո է, որից 6500-ը կստանա հաղթողը: Հայ շախմատիստներն առայժմ մասնակցել են Գրան պրիի միայն մեկ փուլի: Լիլիթ Մկրտչյանը հանդես է եկել Չինաստանի Նանկին քաղաքում կայացած մրցաշարին, որտեղ 11 հնարավորից վաստակելով 6,5 միավոր, զբաղեցրել է 5-րդ տեղը: Այդ արդյունքը Լիլիթին ընդհանուր հաշվարկով 80 միավոր է պարգեւել:

Ավելի հաջող է հանդես եկել Էլինա Դանիելյանը Ստամբուլում կայացած Գրան պրիի մրցաշարում: Նա 8 միավորով 2-րդ տեղը զբաղեցրեց, ինչն Էլինային հաշվարկային 120 միավոր պարգեւեց:

Էլինան եւ Լիլիթը համատեղ կմասնակցեն Գրան պրիի եւս երկու մրցաշարի: Դրանցից առաջինը կայանալու է Ջերմուկում հունիսի 23-ից հուլիսը 6-ը: Մյուսը տեղի կունենա Չիլիի Սանտյագո քաղաքում հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը:

Հոգնատանջ ուղեւորությունն ավարտվեց պարտությամբ

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի կիսաեզրափակիչ առաջին հանդիպումներում էլ հոգնատանջ ուղեւորությունից հետո հյուրերին չհաջողվեց առավելության հասնել մրցակցի նկատմամբ: «Լիվերպուլի» ֆուտբոլիստները գնացքով էին ուղեւորվել Մադրիդ, որտեղ մրցեցին տեղի «Ատլետիկոյի» հետ: Հյուրերին այդպես էլ չհաջողվեց գոլային իրական պահեր ստեղծել: Դաշտի տերերն էլ աչքի չընկան դիպուկությամբ: Հանդիպման ելքը փաստորեն վճռվեց խաղասկզբում, երբ Դիեգո Ֆորլանը գրավեց «Լիվերպուլի» դարպասը:

Համբուրգում տեղի համանուն թիմի եւ Լոնդոնի «Ֆուլհեմի» մրցավեճում դարպասները մնացին անառիկ: Անգլիական ակումբը լավ հնարավորություն ունի մտնելու եզրափակիչ, որը կայանալու է Համբուրգում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 23/04/2010 22:36 Page 1

ԱԶԳ **Օրվա հետքերով**

95 տարի անց

Հայոց ցեղասպանության թուրքական ժխտումները ոչ միայն չեն դիմանում թեկուզ մեկ երկրում եղած արխիվային փաստաթղթերի քննությանը, այլեւ չխանում են հետեւյալ երեւույթից. ափխարհի 20 երկրներ. միջազգային խոշոր կազմակերպություններ, առանձին երկրների նահանգներ, քաղաքներ ընդունել են այն, ինչ թուրքերը «սուս» են անվանում, նկատենք՝ միայն թուրքերը, այն էլ միայն պաշտոնական մակարդակով: Ի դեպ, թուրքական պետության այս ժխտողականությունը նույնպես սկսել է «տարօրինակ» երանգներ ստանալ. «հայ-թուրքական առնչություններով նախատեսված պատմաբանների հանձնաժողովը պետք է քննարկի Ցեղասպանության հարցը», տարբեր առիթներով կրկնում են թուրք պաշտոնյաները: Իսկ եթե, ինչպես դուք եք պնդում, չի եղել Ցեղասպանություն, ապա ի՞նչ կարիք կա քննարկելու, միգուցե միջազգային հանրության «աչքերը փոշոտելու» համար: Ինչեւէ, «հայկական սի» վերաբերյալ 95 տարի անց էլ ամբողջ ափխարհում կատարվում են ոգեկոչման երեկոներ, որոնք թեեւ կազմակերպվում են տեղի հայ համայնքների ջանքերով, սակայն անմասն չեն մնում տվյալ երկրի իշխանությունները, տարբեր պաշտոնյաներն ու հասարակական գործիչները:

Մոսկվա

«Ինչպես արդեն **«Ազգը»** տեղեկացրել է, Ռուսաստանի մայրաքաղաքում Ռուսաստանի հայերի միության ջանքերով կազմակերպվում են մի շարք միջոցառումներ. ապրիլի 22-ին Մոսկվայում թուրքական դեսպանատան առջեւ կազմակերպվեց բողոքի պիկետ՝ պահանջելով Անկարայից վերջապես ուղիղ նայել սեփական պատմությանը: Ապրիլի 23-ին Մոսկվայում կառուցվող Հայ առաքելական եկեղեցու տարածքում՝ անմեղ զոհերի ոգեկոչման եկեղեցական միջոցառում: Այսօր մոսկովյան մետրոյի կայարաններից մեկի մերձակայքում նույնպես բողոքի ցույց կանցկացվի, բացի սրանից, ծաղկեպսակներ կդրվեն եկեղեցու բակում տեղադրված խաչքարի առջեւ, որից հետո Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի մասնակցությամբ կկազմակերպվի սգո պատարագ: Մոսկվայի Երաժշտության միջազգային տանը նույնպես կկազմակերպվի երեկույթ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 95-ամյակին:

Ռուսաստանը 1995-ին ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

Բուենոս-Այրես

Արգենտինայի խորհրդարանի եւ «Արմենիա» մշակութային միության նախաձեռնությամբ ապրիլի 20-ին խորհրդարանի դահլիճում կազմակերպվել է երեկույթ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին: Միջոցառմանը ներկա խորհրդարանի անդամներ Մարիա Խոսե Լուբերտինոն, Ֆաբիո Բաստերիոն, Արգենտինայի արդարադատության գերագույն դատարանի անդամ Էուխենիո Սաֆարոնին, այլ պաշտոնյաներ, հայկական համայնքի ներկայացուցիչներ, ՀՀ դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանը, Հայ առաքելական եկեղեցու Արգենտինայի թեմի առաջնորդ Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը կոչ են արել Թուրքիային՝ հաշվել սեփական անցյալի հետ, ընդունել եւ դատապարտել հայ ժողովրդի դեմ իրականացրած ոճրագործությունը:

Արգենտինան 1993-ին ճանաչել է Հայոց ցեղասպանությունը:

Լիբանան

Այս երկրում անցկացվում են բազմաթիվ միջոցառումներ, ոգեկոչման երեկոներ, քայլարշավներ եւ այլն: Ապրիլի 22-ին «Լյուսի Թութունջյան» պատկերասրահում Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի հովանությամբ բացվել է հայ եւ լիբանանցի արվեստագետների հավաքական ցուցահանդես: Ելույթ ունեցողները կրկին իրենց բողոքն են հայտնել անարդարության դեմ: Ներկա են եղել ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյանը, հայազգի պատգամավորներ, պաշտոնյաներ, Լիբանանի թեմի առաջնորդ Գեղամ եպիսկոպոս Խաչերյանը, լիբանանցի քաղաքական, հասարակական գործիչներ:

Լիբանանը 1997-ին ընդունեց Հայոց ցեղասպանությունը:

Իտալիա

Ապրիլի 19-ին իտալական Պադուայի քաղաքապետարանում տեղի է ունեցել անվանի նկարիչ Գրացիելա Վիգոյի «Հայաստանի սուրբ հողը» գրքի շնորհանդեսը, ինչպես նաեւ գրքի լուսանկարների ցուցահանդեսը՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Միջոցառումը բացել է Պադուայի քաղաքապետ Ֆլավիո Ջանոնանոն, որն իր խոսքում ընդգծել է, որ Պադուան առաջին քաղաքն էր, որը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ քաղաքապետարանի բակում անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշատախտակ փակցնելով. «Անհրաժեշտ է մշտապես հիշել եւ դատապարտել Հայոց ցեղասպանությունը», նշել է քաղաքապետը:

Միջոցառմանը ներկա են եղել Իտալիայի քաղաքական, հասարակական, մշակութային գործիչներ, հայ համայնքի ներկայացուցիչներ, ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանը:

Իտալիան 2000-ին ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

Ափխարհի բոլոր մայր ցամաքներից բերված այս մեջբերումները եւս մեկ անգամ վկայում են, որ «հայկական սուսը» այդպիսին է՝ բացառապես Թուրքիայի համար: Ինչո՞ւ կարող են գրեթե 13 մլն հայեր՝ միահամուռ, եւ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ուրուգվայը, Կիպրոսը, Արգենտինան, Ռուսաստանը, Կանադան, Հունաստանը, Լիբանանը, Բելգիան, Իտալիան, Վատիկանը, Ֆրանսիան, Շվեյցարիան, Սլովակիան, Հոլանդիան, Լեհաստանը, Վենեսուելան, Լիտվան, Չիլին, Շվեդիան, ԱՄՆ-ի ճնշող մեծամասնությունը (42 նահանգ), Գերմանիան՝ իր ընդունած հայտարարությամբ, ինչպես նաեւ շատ այլ երկրների խորհրդարաններ ճանաչել «սուսը» եւ համաձայնվեն քննարկել այն:

ՀՈՎՀԱՆ ԱՖՅԱՆ

Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցը՝ Չեխիայում, Սլովակիայում եւ Հունգարիայում

Այսօր չեխահայ համայնքը Պրահայի կենտրոնում կանցկացնի ցույց-հսկում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին: Ցույցի նպատակն է Չեխիայի իշխանություններից պահանջել Ցեղասպանության պաշտոնական ընդունում: Այնուհետեւ քաղաքի կենտրոնական Սուրբ Յիլիի եկեղեցում հոգեհանգստյան ժամերգություն կանցկացվի Չեխիայի հոգեւոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավչյանի ղեկավարությամբ:

Ժամերգությանը կհետեւի հուշ-երեկոն, որը տեղի կունենա քաղաքային գրադարանի դահլիճում: Ելույթներ կունենան սենատոր Յարոմիր Շտեփինան, կինչի հայ դասական երաժշտություն չեխահայ երաժիշտների կատարմամբ, այնուհետեւ կցուցադրվի Ցեղասպանությանը նվիրված փաստավավերագրական ֆիլմ: Միջոցառումը կազմակերպվել է չեխահայ համայնքի եւ «Արմենիա» ակումբի համատեղ ջանքերով, հովանավորությամբ Ավստրիայում եւ Չեխիայում ՀՀ դեսպան Աշոտ Հովակիմյանի: Երեկոյան GH ART Gallery ցուցասրահում կբացվի պրահայաբնակ հայ նկարիչների գործերի «Ի հիշատակ՝ 95 տարի անց» ցուցահանդեսը:

Երեկ, ապրիլի 23-ին չեխական Յիհլավա քաղաքում «Ուրարտու» հայ-չեխական ընկերության ջանքերով նույնպես անցկացվեցին հուշ-միջոցառումներ, Սուրբ Հոգու եկեղեցում մատուցվեց հոգեհանգստյան պատարագ, բացվեց չեխ ուսանողների 40 ափխատանքների ցուցահանդեսը՝ նվիրված Ցեղասպանության 95-րդ տարելիցին, ցուցադրվեց փաստավավերագրական ֆիլմ:

Ապրիլի 23-24-ը Ցեղասպանության տարելիցին նվիրված միջոցառումներ են անցկացվել եւ անցկացվում նաեւ Սլովակիայի եւ Հունգարիայի մայրաքաղաքներում: Բրատիսլավայում ծաղկեպսակ է զետեղվել հայկական խաչքարի մոտ, այնուհետեւ էկումենիկ ժամերգություն է տեղի ունեցել՝ մասնակցությամբ նաեւ կաթոլիկ ու բողոքական հոգեւորականների, իսկ Բուդապեշտում հոգեհանգստյան պատարագ է մատուցվել, որին ներկա են գտնվել նաեւ Ավստրիայում, Չեխիայում, Սլովակիայում եւ Հունգարիայում ՀՀ դեսպան Հովակիմյանը եւ այդ երկրներում հայ առաքելական եկեղեցու հոգեւոր հովիվ Բարսեղ վարդապետ Փիլավչյանը:

ՀԱԿՈԲ ԱՄԱՏՅԱՆ
Պրահա

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

ԱՄՆ-ի համար Հայաստանի նախագահի ուղերձն անակնկալ չէր

Միացյալ Նահանգները բարձր գնահատելով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի՝ հայ-թուրքական գործընթացից դուրս չգալու որոշումը, հորդորում է Հայաստանին եւ Թուրքիային «բաց պահել դռները հաշտեցման ու հարաբերությունների կարգավորման ջանքերի համար»: Այսպիսի հայտարարություն է արել ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ **Ֆիլիպ Գորդոնը, որ այցելությամբ գտնվում էր Տալլինում:**

Գորդոնի մեկնաբանությամբ, Հայաստանի նախագահի ուղերձում հստակորեն նշվում է, որ Հայաստանը չի դադարեցրել գործընթացը, այլ կասեցրել է արձանագրությունների վավերացման ընթացակարգը, մինչեւ թուրքական կողմը պատրաստ լինի առաջ շարժվելու:

Միացյալ Նահանգները անակնկալի չի եկել Հայաստանի՝ արձանագրությունների վավերացումը կասեցնելու, բայց գործընթացում մնալու դիրքորոշումից: Ըստ էության դրական վերաբերմունք ցուցաբերելով ապրիլի 22-ի ուղերձին, իր հերթին, արդեն Վաշինգտոնում այսպիսի հայտարարություն է արել ԱՄՆ պետքարտուղարի օգնական **Ֆիլիպ Քրոուլին:**

Պետքարտուղարության հերթական ճեպազրույցում Քրոուլին նշել է, որ արձանագրությունների վավերացման առումով կողմերը չի կարելի ասել, թե «մտել են փակուղի, բայց մի տեսակ խոչընդոտների են հանդիպել», բայց ողջունելի է, որ Հայաստանն ու Թուրքիան գործընթացից դուրս չեն եկել: «Որոշակի ժամանակ է հարկավոր գործընթացն առաջ տանելու նոր ազդակներ հաղորդելու համար», ասել է Քրոուլին: Ըստ նրա՝ Հայաստանի նախագահի ուղերձը հենց նոր ազդակների անհրաժեշտությունն է շեշտադրել, ընդգծմամբ, որ Հայաստանը պատրաստ է, ինչի համար էլ ուղերձն անակնկալ չի դարձել ԱՄՆ-ի համար:

ԱՄՆ պետքարտուղարի օգնականը լավատես է, որ ապագայում վերադառնալով այդ հարցին՝ կկարողանան ուղիներ գտնել արձանագրությունները կրկին առաջ տանելու ուղղությամբ: «Դա էր մեր ուղերձը Թուրքիային ու Հայաստանին Միջուկային անվտանգության գագաթժողովի շրջանակներում՝ ապահովել գործընթացի շարունակությունը: Եթե դուք կարծում եք, որ վավերացնելու ժամանակը չէ, սարսափելի ոչինչ չկա, մենք հետքայլ կանենք, կվերագնահատենք իրավիճակն ու առաջ կշարժվենք», ասել է Քրոուլին:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի որոշման հետ կապված հայտարարությամբ է հանդես եկել նաեւ Թուրքիայում ԱՄՆ դեսպանությունը՝ գրեթե նույնաբիտ տեքստով, ինչպիսին մատուցել են ԱՄՆ պետքարտուղարության ներկայացուցիչները: Թուրքական որոշ լրատվամիջոցների փոխանցմամբ, սակայն, Թուրքիայում ԱՄՆ դեսպան **Ջեյմս Ջեֆրին հայկական կողմի որոշման մասին լսելուն պես, հանդիպումներ է ունեցել Թուրքիայի արտգործնախարարության պատասխանատուների հետ, ապա հայտարարել, թե գոհ չէ հայկական կողմի որոշումից: Ջեֆրին դիմել է թուրքական կողմին. «Արձանագրությունների վավերացման համար պետք է ջանքեր գործադրել»:**

Ա. Հ.

Ֆրանսիան ողջունում է Սերժ Սարգսյանի որոշումը

Ֆրանսիայի նախագահը ծանոթացել է Հայաստանի եւ Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների հաստատման եւ սահմանի բացման գործընթացի առնչությամբ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությանը, որի համաձայն Հայաստանը կասեցնում է արձանագրությունների վավերացման ընթացակարգը՝ դուրս չգալով հայ-թուրքական գործընթացից:

Նիկոլա Սարկոզիի պաշտոնական կայքէջում տեղադրված հայտարարության համաձայն, Ֆրանսիայի նախագահը ողջունում է հայկական պետության ղեկավարի կողմից՝ ի նպաստ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման իր հանձնառության վերահաստատումը՝ հակառակ Ցյուրիխում ստորագրված արձանագրությունների վավերացման գործընթացում կողմերի հանդիպած դժվարություններին:

Ֆրանսիան նաեւ,Հայաստանի եւ Թուրքիայի իշխանություններին հորդորել է պահպանել երկխոսությունը եւ կրկնապատկել ջանքերը՝ հիշյալ արձանագրությունների իրագործմանն արագորեն հասնելու համար, «ինչը նշանակալի նպաստ կբերի խաղաղությանն ու անվտանգությանը ողջ տարածաշրջանում»:

Ա. Հ.

Ռուսաստանի արձագանքը

Նախագահ Սերժ Սարգսյանի՝ հայ-թուրքական գործընթացի վերաբերյալ ուղերձից հետո ԱՄՆ-ը, Ֆրանսիան հանդես եկան համապատասխան հայտարարություններով: Ուղերձի՝ ռուսական արձագանքը նույնպես սպասել չտվեց. ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ **Անդրեյ Նեստերենկոն հայտարարել է. «Արձանագրում ենք, որ Հայաստանին ու Թուրքիային այս փուլում չհաջողվեց ինչ-որ արդյունքի հասնել, որը թույլ կտար վերականգնել հարաբերությունները՝ երկու հարեւան երկրների միջեւ եւ այդ կերպ, առողջացնել քաղաքական մթնոլորտը Հարավային Կովկասում, նախադրյալներ ստեղծել այդ տարածաշրջանում կայունության ամրապնդման համար: Ռուսաստանը հույս ունի, որ Հայաստանին ու Թուրքիային կհաջողվի հաղթահարել ներկայիս բարդ իրավիճակն ու պայմաններ ստեղծել հարաբերությունների լայնամասշտաբ կարգավորման համար, որում շահագրգռված են տարածաշրջանի բոլոր երկրները»: Նեստերենկոն նաեւ ավելացրել է, որ ՀՀ նախագահն ընդամենը ամփոփել է Թուրքիայի հետ բանակցությունների անմխիթար վիճակը. «Հայաստանի նախագահը շեշտել է, որ Երեւանը հետ չի կանչում իր ստորագրությունը, այլ միայն կասեցնում է արձանագրությունների վավերացումը: Այսպիսով՝ Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացի հեռանկարը պահպանվում է», եզրափակել է ռուս դիվանագետը:**

Հ. Ա.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՂՅԱԼ ՀԱՍԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրիգոր Նարեկացի» ԲԿ» ՓԲԸ-ն «Ազգ» օրաթերթի 21.04.2010-ի N 71 համարում հայտարարված ԳՆԲԿ-ՄԲԱՊՁԲ-01 ծածկագրով մրցակցային բանակցությունները («Գրիգոր Նարեկացի» ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով) չեղյալ է համարվում ֆինանսավորման հետաձգման պատճառով:

Տնօրեն՝ Լ. Գրիգորյան

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 23.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: